DOI: 10.57192/18291864–2023.1–148

Արսեն Է. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Մաս երրորդ: Երաշտ, մորեխ*

Բանալի բառեր – վիմագիր, երաշտ, ծես, պաշտամունք, մորեխ, հացի սղություն, ցորենի ու կորեկի թանկություն, պատերազմ, երկրաշարժ, սով, եկեղեցի, խաչքար:

Մուտք

Հայերեն վիմագրերում բնական աղետներին ու երևույթներին նվիրված սույն հոդվածաշարի նախորդ երկու մասերում[1] փորձեցինք ընդհանրացնել երկրաշարժերի, Արեգակի խավարման, ծովի ալեկոծման և դրա հետևանքով նավաբեկության ու ջրահեղձման վերաբերյալ մեզ հայտնի հիշատակությունները, ուստի շարունակելով թեմատիկ շարքը՝ ներկա հրապարակմամբ անդրադառնալու ենք միջնադարյան սկզբնաղբյուրներում և ժողովրդական ավանդության մեջ երաշտի ու մորեխների կտրուկ ակտիվացման մասին պահպանված վկայություններին ու դրանց հետևանքային դրսևորումներին, մասնավորապես՝ հացի սղությանը, թանկությանն ու սովին, որոնք արտացոլվել են նաև վիմագրական հուշարձաններում:

---

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.03.2022: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

1 Տե՛ս **Հարությունյան Ա.**, Տարերային աղետներն ու երկնային երևույթները վիմագրերում. մաս առաջին: Երկրաշարժ, «Վէմ», Եր., 2022, N 1, էջ 178-196, **նույնի**՝ մաս երկրորդ: Արեգակի խավարում, ծովի ալեկոծում, «Վէմ», 2022, N 3, էջ 168-196:

Ա. Երաշտ

Մատենագրության մեջ, ինչպես նաև ազգագրական ու բանահյուսական նյութերում բազմաթիվ վկայություններ են պահպանվել եղանակային անոմալիաների, բնակլիմայական փոփոխությունների, հատկապես՝ սաստիկ շոգի, ջրի սակավության, սերմերի չորացման, մկների, մորեխների ու թրթուրների ակտիվացման և առհասարակ երաշտի մասին, որն աղբյուրներում հիմնականում «երաշտութիւն» ձևով է հիշատակվում: Դեռևս Ս. Գրքում Երուսաղեմը պատուհասած երաշտի հետևանքները Երեմիա մարգարեն այսպես է մեկնում. «Եւ գործ երկրին պակասեաց, զի ո՛չ եղեւ անձրեւ ի վերայ երկրի.... Եղինք ի վայրի ծնան, եւ թողին զծնունդս, զի ո՛չ գոյր բանջար: Եւ ցիռք (վայրի էշ – Ա. Հ.) ի դաշտս ծծեցին զօդս իբրեւ զվիշապս. եւ սորեցին (տկարացան – Ա. Հ.) աչք իւրեանց, զի ո՛չ գոյր խոտ» (Երեմիա, ԺԴ. 4–6):

Բազմաշնորհ հայրապետ **Ներսես Շնորհալին** իր «Ողբ Եդեսիոյ» պոեմում աստվածային պատիժ է համարում տարերային աղետներից կարկուտը, եղյամը, անձրևների պակասն ու երաշտը, ինչպես նաև մորեխների, մկների, մլակների բազմացումն ու դեղնացավը. «Եւ կամ բերումն կարկտին եւ եղեման խստագունին, / Կամ անձրեւաց գալ անչափին, կամ՝ անխոնաւ խիստ երաշտին, / Կամ՝ բազմութեան յոյժ մարախին (մորեխին – Ա. Հ.), կամ՝ դալընկին (դեղնացավին – Ա. Հ.) եւ մնինային (մլակին – Ա. Հ.), / Եւ կամ՝ մկան զազրագունին ի յեռացումն անդաստանին»[2]: Մարդկությանը ժամանակ առ ժամանակ պատուհասած բնական աղետների գրեթե նույն շարքն է վկայված նաև **Մխիթար Գոշի** հայսմավուրքային վարքում, որում ներկայացվում է վարդապետի տեսիլքը Տիրոջ գերեզմանի մոտ: Մխիթար վարդապետի թախանձանքին ի պատասխան՝ Տերը նրան շնորհում է «....սկուտեղ Գ. (3) նշխարաւ և փոքրիկ սկաւառակ մի՝ լի բաժակաւ»[3]՝ ասելով, թե «....ուր և հասանեն դո-

2 **Ներսէս Շնորհալի**, Ողբ Եդեսիոյ, առաջաբանը եւ քննական բնագիրը՝ **Պ. Խաչատրեանի** եւ **Մ. Մկրտչեանի**, «Մատենագիրք Հայոց», հատ. ԻԱ., գիրք Ա., Եր., 2018, էջ 192:

3 «Վարք եւ պատմութիւն **Գոշին Մխիթարայ**», տե՛ս **Մինասյան Թ.**, Ուտիքի գրչության կենտրոնները, Եր., 2020, էջ 202:

քա, ոչ լինի սով երկրին այն, և ոչ մորեխ, և ոչ թրթուր, և ոչ ժանկ[4], և մինենայ, և ոչ տալուկ, և ոչ ջորեակ, և ոչ մուկն, և ոչ կարկուտ, և ոչ մահ, և ոչ գերութիւն»[5], այլ կլինեն միայն «....առատութիւն և փարթամութիւն երկրի, և առողջութիւն ամենայն ցաւոց»[6]:

Չոր եղանակը, ձյան ու անձրևների տևական դադարը, դրանց հետևանքով նաև մորեխների, թրթուրների և վնասատու այլ միջատների աննախադեպ տարափը մարդկության պատմության մեջ ուղեկցվել են հիմնականում հացի սղությամբ, դրանով պայմանավորված՝ նաև թանկացումներով, սովով ու համաճարակներով[7]: Հայ իրականության մեջ երաշտի դեմ հաճախ ծիսակատարություններ[8] ու աղոթքներ[9] են արվել: Օրինակ՝ «Մաշտոց» ծիսարանն ունի «Աղաւթք ի վերայ Երաշտութեան. Անձրեւ լինի» խորագրով միավոր, որն ի Տեր ուղղված աղոթք է. «Դո՛ւ, Տէր ամենայնի, զքո ինքեան գթութիւնդ բարեխաւս ունելով, անձրեւ ըստ կամաց պարգեւեայ ժառանգութեան քում, եւ զբազմամեղութիւնս մեր անտես արա, եւ զանձրեւս քո առաքեա՛, որք պետս ունին եւ խնդրեն....»[10]: Համանման է 1631 թ. Կաֆայում (Ղրիմ) երաշտի դեմ պայքարը ներկայացնող գրավոր հիշատակությունը, երբ մարդիկ «....վասն երաշտու-

4 Ժանգը մակաբույծ սնկերից առաջացող հիվանդություն է, որը տարածվում է հատկապես հացաբույսերի վրա (տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 2, Եր., 1944, էջ 139):

5 **Մինասյան Թ.**, նշվ. աշխ., էջ 202:

6 Նույն տեղում:

7 16-րդ դարավերջին և 17-րդ դարասկզբին գրանցված եղանակային անոմալիաների, ինչպես նաև թուրք-պարսկական պատերազմի հետևանքով առաջացած ճգնաժամի համատեքստում 1606-1609 թթ. մեծ սովը հանգամանորեն ներկայացրել է պատմաբան Միքայել Մալխասյանը (տե՛ս **Մալխասյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, Եր., 2020, էջ 176-208): Սովի և դրա մատենագրական վկայությունների մասին տե՛ս նաև վերջերս հրատարակված մեր հոդվածը՝ **Հարությունյան Ա.**, Սովի վկայությունները ժէ. դարասկզբի մատենագրական աղբյուրներում, «Բանբեր Մատենադարանի», Եր., 2021, N 32, էջ 224-233:

8 Դրանց մասին տե՛ս, օրինակ, **Լալայան Ե.**, Բորչալուի գաւառ. Ձրի պաշտամունք, տարրերի և ֆիզիկական երևույթների պաշտամունք, «Երկեր», հատ. 3, պատ. խմբ.՝ **Վարդումյան Դ.**, Եր., 2004, էջ 195-196, 204-208, **Լիսիցյան Ստ.**, Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 126-134, **Բդոյան Վ.**, Երկրագործական պաշտամունքի տարեշրջանը, «Երկրագործական մշակույթը Հայաստանում», Եր., 1972, էջ 433-501, **Հայրապետյան Թ.**, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկիակադիր ընկալումների շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2004, N 3, էջ 217-227, **Papoli Yazdi M.-H.**, **Jalali A.**, Rituals to Appease the Providence to Send Rain During Drought Periods, “The Circle of Ancient Iranian Studies”, Akhbar, Daily Newspaper, N 54, էջ 186-210, http://www.cais-soas.com/CAIS/Celebrations/drought_ritual.htm. (մուտք՝ 28.02.2022), **Հովսեփյան Ռ.**, Հայաստանի եզդիների «Բուկա բարանե» («անձրևի հարս») և մյուս անձրևաբեր ծեսերը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2017, N Ա., էջ 114-146:

9 Տե՛ս «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», աշխատությամբ՝ **Ս. Հարությունյանի**, Եր., 2006, էջ 146:

10 «Մայր Մաշտոց», հատ. Ա., գիրք Ա., ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք, աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Ս. Էջմիածին, 2012, էջ 416, Լէ. (37):

թեան համար չաւք արաք»[11], այսինքն՝ ծնրադիր աղոթել են, իսկ, օրինակ, Սյունիքում «երաշտի ժամանակ մատաղ էին մորթում»[12] կամ կաթնով եփում՝ «կաթնավով մատաղ», որն ունեցել է երկու գործառույթ՝ անձրևաբեր և անձրևախափան[13]:

Երաշտից կամ նմանօրինակ այլ աղետներից պաշտպանվելու համար բնակավայրերի բարձրադիր վայրերում նաև խաչքար-կոթողներ են կանգնեցվել, որոնք **Ցասման խաչեր** են կոչվել, քանզի դրանց «....հիմնական գործառույթը բնական աղետների կանխումն էր»[14]: Դեռևս Դավիթ Անհաղթի հեղինակած՝ կենսատու սուրբ խաչին նվիրված ներբողի մեկնության մեջ Ներսես Շնորհալին տերունական սուրբ նշանը բնութագրում է իբրև «Նահատակաց վիգ եւ վահան, / Վտանգելոց աւժընդական....»[15], այսինքն՝ վտանգի, աղետի ժամանակ օժանդակող, օգնող, պաշտպանող, իսկ խոստովանական աղոթքում խաչի մկրտության ու օրհնության կարգը նկարագրելիս հատկանշում է խաչին շնորհ ու զորություն պարգևելու քրիստոնյաների խնդրանքը Տիրոջը, «....որպէսզի զդևս հալածեսցէ, և զախտս ի մարդկանէ սրբեսցէ, և ցասումն, որ վասն մեղաց մերոց իջանեն ի վերուստ, դադարեցուսցէ....»[16]: Այս երևույթը վավերացնում է նաև **ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր գյուղից** ոչ հեռու՝ Աղջկաբերդ ամրոցից հյուսիս, ճամփեզրին գտնվող և 11-12-րդ դդ. թվագրվող խաչքարի վիմագիրը (նկ. 1ա, բ): Երբեմնի 2 մ բարձրությամբ կոթողից բեկորներ են մեզ հասել: Վերջերս դրանք տեղում լուսանկարել է հնագետ Տիգրան Ալեքսանյանը: Մասամբ պահպանված արձանագրությունը վկայում է խաչքարը դժվարությամբ ձորից բերելու, հանդիսավորությամբ օրհնելու և ահեղ օրերին ի բարեխոսություն առ Քրիստոս կանգնեցնելու մասին:

---

11 **Խաչատուր Կաֆայեցու** տարեգրությունը (XVII դ.), «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա., կազմեց՝ **Հակոբյան Վ.**, Եր., 1951, էջ 219:

12 **Լիսիցյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 129:

13 Տե՛ս **Հովսեփյան Ռ.**, **Աբրահամյան Հ.**, «Կաթնավով մատաղ»՝ անձրևաբեր և անձրևախափան ծես Սյունիքում, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2022, N 3, էջ 352:

14 **Պետրոսյան Հ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 264:

15 **Ներսէս Շնորհալի**, Ներբողեան կենսատու սուրբ խաչին առ ի սրբոյ հաւրէն մերմէ Դաւթէ ասացեալ, առաջաբանը և քննական բնագիրը՝ **Ա. Մելքոնեանի**, «Մատենագիրք Հայոց», հատ. ԻԱ., գիրք Ա., էջ 556:

16 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Եր., 1961, էջ 140:



Նկ. 1ա, բ. Ահեղ օրերին ընդառաջ կանգնեցված խաչքարի արձանագրությունը. 11–12-րդ դդ.
(լսնկ.՝ Տ. Ալեքսանյանի, 2022 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2023 թ.)

...ՏԱՓԻՆ ԱՒԵՏԱՐԱ[ՆԻՍ] ... /
... ՁՈՐԻ ԲԵՐԱՔ ԱՇԽԱՏՈՒԹԼԵԱՄԲ Ք[ԽԱ]/ՉՍ,
[Ա]ՒՐՀՆԵՑԱՔ ՀԱՆԴԻՍԻՒ, ԲԱ[ՐԵ]/ԽԱՒՍ ԱՌ ՔՐԻՍՏՈՅՄ՝
ՅԱՀԵՂ ԱՒՈՒՐՆ, ՈՐՔ ԵՐԿ[Ր]/Պ[Ա]ԳԷՔ...[17]:

Դեռևս 19-րդ դարավերջին վիմագիրը տեսել և ընդօրինակել է Ս. Էջմիածնի միաբան Մակար եպս Բարխուդարյանցը, որի հաղորդմամբ՝ խաչքարը՝ «կիսատ», իսկ վիմագիրը թեև տեղ-տեղ եղծված, սակայն ամբողջական տեսքով է եղել. «...ութեամբ ողորմեալ, ես ... Կիւրիկէի, զԱբասայ աւազան է... որդեկիր եւ զտէր Յովհաննէս ե...սի արձան շին... իյո... տափին աւետարան... ի ձորի բերաք աշխատութեամբ խաչս կանգնեցաք հանդիսիւ, բարեխաւս առ Քրիստոս Յիսուս յահեղ աւուրն դատաստանի»[18]: Հասկանալի է, որ վիմագրում հիշատակվում են Տաշիր-Ձորագետի թագավորության գահակալներ Կյուրիկե Բ-ն և նրա որդիներից Աբասը (նրանց անունները վկայված են նաև սույն հոդվածի վերջին վիմագրում), որոնց ապրած ժամանակաշրջանով էլ կարելի է թվագրել կոթողը՝ 11-12-րդ դդ.:

1935 թ. նախկին Շամշադինի շրջանի վիմագրական գիտարշավի ընթացքում արձանագրությունը մասնակիորեն փաստագրել է նաև հնագետ-վիմագրագետ Կարո Ղաֆադարյանը՝ ներկայացնե-

17 **Ղաֆադարյան Կ.**, Շամշադինի 1935 թվի հնագիտական գիտարշավը, «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության», հատ. 5, Եր., 2007, էջ 301: Հմմտ. **[Շահինյան Ա.]** Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Եր., 1984, էջ 63:
18 **Մակար եպս Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ, Եր., 1999, էջ 327:

լով վիմագրի ոչ ամբողջական, սակայն առավել ճշգրիտ վերծանությունը (տե՛ս վերը), իսկ 1972 թ. արված իր դաշտային գրառումներում այն հիշատակում է նաև բանասեր-բանահավաք, ծագումով այգեձորցի Իսահակ Չանգլյանը՝ նշելով կոթողի չափերը՝ 2.0x1.0x0.40 մ, և այն, որ կոթողն ընկած ու երկատված է[19]: Վերջինիս հաղորդմամբ՝ այս խաչքարի մասին ավանդություններ են պահպանվել[20], որոնցից մեկը փոքր-ինչ այլ տարբերակով հիշատակում է նաև բանագետ Արամ Ղանալանյանը, ըստ որի՝ Աշոտ Երկաթն իր զորքով ամրացել է Տավուշ բերդում ու դիմադրել արաբներին: Օգնության հասնող տեղացի աղջիկներից մեկն իր հյուսերով մի մեծ քար է վերցրել ու բերդի գլխից գցել թշնամու վրա: Սրանք ահից փախել են, իսկ քարի անունը մնացել է **Աղջկաքար**[21]:

Շատ ավելի որոշակի է պատմական Հայաստանի Բզնունիք գավառի Արծկե գավառամասի **Առնջկուս գյուղի** գերեզմանոցի խաչքարերից մեկի արձանագրության բովանդակությունը, ըստ որի՝ 1515 թ. ողջ երկրամասում երաշտ է եղել (նկ. 2ա, բ):



Նկ. 2ա, բ. 1515 թ. երաշտի մասին վկայող խաչքարը. Բզնունիք, գ. Առնջկուս
(լսնկ. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2017 թ.)

Թվ[ին] ՉԿԴ. (1515), էն տարին, որ ծարաւ յամէն գերկիրն տարաւ[22]:

19 Տե՛ս **Չանգլյան Ի.**, Շամշադին. պատմական տեղեկություններ, Եր., 2011, էջ 31:
20 Տե՛ս նույն տեղում, էջ 31-32:
21 Տե՛ս **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 61, N 165:
22 **Կարապետյան Ս.**, Հայաստանի պատմություն, հատ. Գ., Արծկե, Եր., 2017, էջ 75, արձ. բ:

Ակնհայտ է, որ խաչքարը կանգնեցվել է ոչ թե ննջեցյալի հոգու փրկության ու բարեխոսության համար, ինչպես ընդունված էր, այլ երկիրը տարերային աղետներից, տվյալ դեպքում՝ երաշտից հեռու պահելու, հետևաբար նաև անձրևի տեղալու համար[23], քանի որ ծարավ, այսինքն՝ չոր, երաշտ տարին ողջ երկիրը (թերևս գավառը) աղետի էր հասցրել:

Անդրեաս սրկ. Եվդոկացու ժամանակամերձ մի հիշատակության համաձայն, սուլթան Սելիմ Ա-ի և շահ Սեֆիի բանակների միջև Չալդրանում (Վանի նահանգ) 1515 թ. տեղի ունեցած ճակատամարտից (ստույգ ժամանակը՝ 1514 թ. օգոստոսի 23) բացի, «ի թվին ՁԿԴ. (1515) ...կարկուտ անկեալ յերկնից հիանալի. և եղև սղութիւն հացի, որ քիլակն եղև Լ. (30) օթմանի...»[24], այսինքն՝ Վանի նահանգում կարկուտը ոչնչացրել է հացահատիկը, ինչի հետևանքով հացի (ալյուրի) պակաս ու թանկություն է եղել:

Սրբազան կոթողների պաշտամունքը բնության արհավիրքների դեմ կենցաղավարել է նաև հետագայում: Ազգագրագետ, բանահավաք Գարեգին եպս Սրվանձտյանցի բնորոշմամբ՝ նմանօրինակ կոթողները Ցասման խաչ էին կոչվում, «....վասնզի երբ տարաժամ ձյուն կամ կարկուտ տեղա, բերքերուն վնասե, երբ մարախն (մորեխը – Ա. Հ.) ու թրթուրը բույսն ու կանաչը գոսացընեն, երբ երաշտություն լինի, երբ ցավ ու մահ պատահին մարդոց և անասնոց, երբ երկրաշարժ լինի, և ինչ վնաս, որ պատահի երկրին, այն որ մարդոց ըրած չէ. Աստուծո ցասումն կը համարին. և այդ ցասման դեմն առնելու համար Քրիստոսի խաչին պատկերը կը բարձրացընեն այսպես երկնքից առջև, որ պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչեն, և Աստված հաշտվի»[25]: Պատմական Բագրևանդ գավառի նկարա-

23 Բնական աղետների դեմ կանգնեցված խաչքարերի մեզ հայտնի օրինակներից են նաև Տաթև գյուղին հարակից Պետրոսախաչի խաչքարը, որի ստորին մասը կանգնեցված է բլրի գագաթին, իսկ վերին կեսն ընկած է լանջին՝ ջրի մոտ, որի վրա անձրևաբեր ծես է կատարվում (տե՛ս **Hovsepyan R.**, On the Rain-Related Rituals of Tatev Village, Armenia (Ethnographic field-notes), «Լրաբեր» հաս. գիտ., 2018, N 3, էջ 347-356, **Հարությունյան Ա.**, Պետրոսախաչի նորահայտ արձանագրությունը, «Էջմիածին», 2018, N Թ., էջ 81), և Վրաստանի Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Էնագեթի և Արդիսուբանի գյուղերի միջև գտնվող 1455 թ. խաչքարը, որի վիմագրի համաձայն՝ այն կանգնեցվել է իբրև բարեխոս առ Քրիստոս՝ անդաստանի (հանդ, դաշտ) պահպանության համար. «Կանգնեցաւ խ(ա)չս / բարեխաւս առ Ք(րիստո)ս / վ(ա)ս(ն) անդաստ(ան)իս մերոյ: / ՁԴ. (1455) թվ(ի)ն: Տ(է)ր, Ա(ստուա)ծ, Յ(իսու)ս, Ք(րիստո)ս» (ըստ Նիկիտա Իվանովի տրամադրած լուսանկարի, 2023 թ.):

24 **Անդրեաս սարկավագ Եվդոկացու** ժամանակագրությունը (XVI դ.), «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա., էջ 156:

25 **Սրվանձտյանց Գ.**, Գրոց ու բրոց, «Երկեր», հատ. 1, Եր., 1978, էջ 80-81:

գրության համապատկերում նման տեղեկություններ է հաղորդում նաև բանասեր, բանահավաք Սարգիս Հայկունին, երբ նշում է, որ «Բագրեւանդայ շատ մի գիւղերու մօտ՝ բարձր դիրքի վերայ, տեսած եմ մեծ խաչ արձաններ, որոց գիւղացիք Սասման խաչ կասեն, որ լինելու է Ցասման խաչ, արդէն երբ երաշտ լինի, զոհ կը մատուցանեն՝ եզ, կով, ոչխար և այլն....»[26]: Քաջբերունու հաղորդմամբ էլ՝ Վայոց ձորի Գնիշիկ գյուղի բարձրադիր Դալի (խելագար) խաչ կոչված մատուռը տեղացիների համար ուխտավայր է դարձել, որտեղ մատաղ են անում, աղոթում ու խնկարկում, իսկ 1853–1855 թթ. Այար (Ագարակաձոր) գյուղից Մկրտիչ քհն. Մարտիրոսյանցը մորեխի անխնա բազմացումը կանխելու համար ծնրադիր աղոթել է Դալի խաչի հին խաչքարերի առաջ, որից հետո «....մորեխը դարձել է այլ կողմի վրա, և քահանան շինում է մատրան ներկա շինությունը»[27]:

Գրեթե նույն գործառույթն են ունեցել նաև սրբազան մյուս առարկաները, մասնավորապես՝ սրբապատկերները, ձեռագիր սուրբ գրքերն ու սրբոց մասունքները: Օրինակ՝ Շիրակում երաշտի ժամանակ հատուկ պաշտամունք է ունեցել Գյումրիի Ս. Աստվածածին (Յոթ Վերք) եկեղեցում պահվող «Տիրամոր յոթ վերքը» սրբապատկերը: Քահանան այն դուրս էր բերում, բազմությունն աղոթում էր, իսկ «....կանայք երկնքին նայելով արտասվում, որ երկինքը խղճա, և անձրև գա.... Չի եղել դեպք, որ այդ արարողությունների արդյունքում անձրև չգար»[28]: Թեև մեր օրերում մոտեցումները փոխվել են, սակայն Ս. Աստվածածնի վերափոխման նախատոնակին՝ շաբաթ երեկոյան, սրբապատկերը թափորով դուրս է բերվում եկեղեցուց, տարվում Գյումրիի Վարդանանց հրապարակ, որտեղ անդաստանի, այսինքն՝ արտերի օրհնության ծիսակարգ է կատարվում[29]: Հարկ է նկատել, որ երաշտի դեմ կատարվող նմանօրինակ արարողությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ նախաքրիստոնեական շրջանում կենցաղավարած երևույթների վերապրուկներ: Այս առումով լավագույն զուգահեռը երաշտի ժամանակ Նարի և Անահիտի կուռքերը դուրս

26 **Հայկունի Ս.**, Բագրեւանդ. Զրաբաշխ գաւառ, մասն Ա., Վաղարշապատ, 1894, էջ 130, ծնթ. 2:
27 **Քաջբերունի**, Ճանապարհորդական նկատողություններ, հրատարակության պատրաստեցին՝ **Քալանթարյան Ա.**, **Սարգսյան Գ.**, **Մելքոնյան Հ.**, Եր., 2003, էջ 364:
28 **Մկրտչյան Ս.**, Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Եր., 2010, էջ 110:
29 Տես **Աբրահամյան Հ.**, Գյումրու «Յոթ Վերք» սրբապատկերի պատմությունը, «Էջմիածին», 2017, N Բ., էջ 111:

բերելու, տարածքում պտտելու, այնուհետ դրանց վրա ջուր լցնելու և զոհ մատուցելու անցյալում կատարված ծիսակարգն է[30]:

Առավել հետաքրքրական են երաշտը հրաշագործություններով ու աղոթքներով կասեցնելու մասին մատենագրական վկայություն-ները: Այսպես, ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու հաղորդմամբ, Փիլիպոս Ա Աղբակեցի Ամենայն հայոց կաթողիկոսը (1633–1655) 1651 թ. տնօրինական այցով եղել է Երուսաղեմում, այնուհետ՝ Կոստանդ-նուպոլսում, որտեղ մեծ պատվի է արժանացել «....վասն նորահրաշ սքանչիցն, զի յայնմ ամի երաշտութիւն էր և առաջի ամենեցուն աղօթեաց (Փիլիպոս կաթողիկոսը – Ա. Հ.), և ի նոյն ժամն եկն անձրև սաստիկ: Եւ անտի դարձաւ յաթոռն իւր ի սուրբ Էջմիածին»[31]: Ուշագրավ է նաև Հակոբ Տիվրիկցու «Տարեգրության» մեջ երաշտին առնչվող հատվածը, ըստ որի՝ 1781 թ. Տիվրիկում «....ձմեռն սակաւ սաստիկ, ի գարունն ոչ ցօղեաց անձրև....»[32], այդ պատճառով թե՛ մահմեդականների և թե՛ քրիստոնյաների երեխաները երեք օր շա-րունակ աղոթեցին («տուվա ըրին»), քրիստոնյաները նույնիսկ «....երկու եզ առնելով Աստուածամօր հսկում (պաշտամունքի – Ա. Հ.) գնացին, և յորժամ զենին (մատաղ արեցին – Ա. Հ.), հրամանաւ Աս-տուծոյ, առժամայն եօթը օր և եօթը գիշեր անձրև տեղաց և ցորենին քիլէն 4 ղրուշ իջաւ և տասներեք օխան շիրան 1 ղրուշ կուտային»[33]: Իսկ Ամասիայի և Մարզվանի հոգևոր առաջնորդ, աստվածաբան Հովհաննես արք. Չերքեզյան Սեբաստացու մահն ու թաղումը նկա-րագրելիս (1797 թ. հոկտեմբերի 26) Բաղդասար դպիրն արձանա-գրում է թաղման մասնակիցների զարմանքն առ այն, որ ննջեցյալի մարմինը մահից երեսունչորս ժամ հետո, փոխանակ նեխելուն, «....անուշահոտ բուրմամբ զմայլեցոյց զբազմախուռ ամբոխսն և երեսք նորա պայծառացեալ փայլէր և իբր կենդանի դնէր ծիծաղա-խիտ ի դագաղի»[34]: Ավելին՝ այդ նույն օրը՝ երկու ամիս տևած երաշտից հետո, «....այնմ աւուր բացան երկնից սահանք և լուծան

30 Տե՛ս **Մելիք-Փաշայան Կ.**, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 30-31:

31 **Դավիթ Բաղիշեցու** ժամանակագրությունը (XVII դ.), «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ., կազմեց՝ **Հակոբյան Վ.**, Եր., 1956, էջ 360-361: Ժամանակագիր Վարդան Բաղիշեցու հաղորդմամբ՝ Փիլիպոս կաթողիկոսը Երուսաղեմ է գնացել «....18 վարդապետօք և 70 կրօնաւորօք աբեղայիւք.... և շինեաց զսալայարկ յատակն սուրբ Յակոբայ գեղեցիկ և վայելուչ» (նույն տեղում, էջ 395):

32 **Հակոբ Տիվրիկցու** տարեգրությունը (XVIII դ.), «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ., էջ 464:

33 Նույն տեղում:

34 **Բաղդասար դպիրի** ժամանակագրությունը (XVIII դար), «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա., էջ 345:

քաղցրատեղաց անձրեւս, որ երկ ամիս յառաջ երաշտութեամբ ծարավէր երկիր և էր ժամանակ սերմանելոյ....»[35]:

Դառնալով վիմագրական հուշարձաններին՝ նկատենք, որ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը ՀՀ Շիրակի մարզի **Բարձրաշեն գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու** հյուսիսային պատի ութտողանի արձանագրությունը հետևյալ կերպ է մեկնում. «....սպասալարների օրոք, երաշտի հետևանքով խանձվում են դաշտերը և դրա հետևանքով զեղջվում են մի շարք հարկեր....»[36] (նկ. 3ա, բ): Դրանցից նա առանձնացնում է *հարսնեհակն* ու *շարիաթը,* որոնցից առաջինը բացատրում է իբրև «առաջին գիշերվա իրավունքը»[37] ստանալու հարկ:

Նկ. 3ա, բ. Բարձրաշենի Ս. Աստվածածին եկեղեցին և դրա հյուսիսային պատի արձանագրության գրչապատկերը. 13-րդ դար (լսնկ. և գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2016 թ., 2022 թ.)

Խնդրո առարկա վիմագրին ավելի ուշ անդրադարձել է նաև վիմագրագետ, լեզվաբան Սուրեն Ավագյանը, որը *հարսնեհակն* ու այլ վիմագրերից հայտնի *հարսանեհակն* իրավացիորեն համարում է նույնիմաստ, այն է՝ «....հարսանիքի, ամուսնության հասույթը, որ միջին դարերում ամուսնացողները պետք է վճարեին տեղական աշխարհիկ

35 Նույն տեղում:
36 **Բարխուդարյան Ս.**, Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ և դիտողություն, «էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու), պատ. խմբ.՝ **Բարխուդարյան Վ.**, **Հակոբյան Վ.**, Եր., 1971, էջ 90:
37 Նույն տեղում, էջ 91:

իշխանավորներին»[38]: Ս. Ավագյանը երաշտի մասին ոչինչ չի ակնարկում՝ թերևս կռահելով, որ վիմագրում այդօրինակ վկայություն պարզապես չկա, իսկ Ս. Բարխուդարյանի գրչապատկերած «խանձեցաւ» բառն իրականում պետք է վերականգնել «թախանձեցայ ի բարի գործ....»[39], ինչպես արել ենք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի համապատասխան պրակը հրատարակության պատրաստելիս:

Մեզ են հասել երաշտի, ինչպես նաև պատերազմական գործողությունների հետևանքով հացի սղության, թանկության ու սովի մասին վկայող վիմագրեր[40]: Դրանցից մեկը **Տաթև գյուղի** սկզբնամասում Սյունյաց առաջնորդ, ծագումով տաթևացի Հովհաննես եպս Ղալամյանցի նախաձեռնությամբ կառուցված աղբյուրի շենքի 1745 թվակիր շինարարական վիմագիրն է, որի վերջում գրիչը նշում է պարսից Նադիր շահի օրոք (1736–1747) ցորենի (հացի) թանկության մասին (նկ. 4ա, բ):

Նկ. 4ա, բ. Տաթևի գյուղամիջյան աղբյուրի արձանագրությունը. 1745 թ. (լսնկ. և գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2018 թ., 2023 թ.)

38 **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1986, էջ 162:

39 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ X. Շիրակի մարզ, կազմեց՝ **Բարխուդարյան Ս.**, պատ. խմբ.՝ **Սարգսյան Գ.**, **Հարությունյան Ա.**, Եր., 2017, էջ 30, արձ. 30: Ս. Բարխուդարյանի վերծանությանն է հետևել նաև հնագետ Ա. Գրիգորյանը՝ վիմագրում վկայված ապահարկման երևույթը համարելով երաշտի հետևանք (տե՛ս **Գրիգորյան Ա.**, Արտակարգ իրավիճակները և ճգնաժամային կառավարման միջոցառումները միջին դարերում, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, N 13, Եր., 2018, էջ 240):

40 Միջնադարյան վիմագրերում հացահատիկի՝ ցորենի, գարու և կորեկի վերաբերյալ հիշատակություններն առավելապես ապահարկման և իրավական նորմերի հաստատման շրջանակներում են, ինչը ներկա պահին մեր ուսումնասիրությունից դուրս է:

.... ՆԱՏԻՐ ՇԱՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԸՆ ԷՐ. / ՅՈՐԼԵՅՆԻՆ ԲԵՌՆ ԳՆԱՐ ԺԲՌ. (12.000) ԴԻԵՆ, ԹՎԻՆՅ ՌՃՂԴ. (1745)[41]:

Մատենագրության մեջ պահպանվել են ժամանակամերձ հիշատակություններ Վանում, Ամիդում և հարակից այլ բնակավայրերում գրանցված թանկության ու սովի մասին[42], իսկ Տաթևի հիշյալ վիմագիրը մասնավորեցնում է խնդրի հիմնապատճառը՝ Անդրկովկասում Նադիր շահի վարած քաղաքականությունը:

18-րդ դ. երկրորդ կեսին ծավալված հայ ազգային-ազատագրական շարժման ընթացքում սաստկացել են հարկահանությունը և տուրքերի գանձումը, ինչի հետևանքով Անդրկովկասի հատկապես արևելյան շրջաններում սով է սկսվել[43]: Ակնհայտ է, որ Տաթևից մեզ հասած վիմագիր հիշատակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժամանակի դեպքերի քարեղեն «հավաստագիր», ըստ որի՝ ցորենի բեռը (պարկը) արժեր 12.000 դիան (արծաթե դրամ):

Համանման զույգ վիմագրեր են հայտնի նաև 1880 թվականից. մեկն անարվեստ գրչությամբ արձանագրություն է՝ արված սալաքարի վրա, որը սկզբնապես գտնվում էր **ՀՀ Սյունիքի մարզի Վահրավար գյուղում**, բայց ներկայումս տեղակայված է **Ագարակ քաղաքի** Շինարարների փողոցում՝ բժիշկ Ախպերջանյանների աղբյուրի հարևանությամբ (նկ. 5ա, բ), իսկ մյուսը փորագրված է **ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղում** կանգնեցված Հայաստանի ամենաբարձր խաչքարի՝ Զոլախաչի թիկունքին, մասամբ՝ նաև աջակողմյան նիստին և վարդյակի տակ: Դրանք տարիներ առաջ հրատարակել է վիմագրագետ Աշոտ Մանուչարյանը՝ աղետի պատճառ համարելով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ու ժամանակի անբերրի տարիները, այսինքն՝ երաշտը: Ահա Ագարակում գտնվող սալաքարի ութտողանի արձանագրությունը:

---

41 ԴՀՎ, պրակ II. Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ **Բարխուդարյան Ս.**, Եր., 1960, էջ 34, արձ. 65:

42 Այդպիսիք տե՛ս **Անանուն Վանեցու** տարեգրությունը (XVIII դ.), «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա., էջ 373-374: Տե՛ս նաև **Մարտիրոս խալիֆայի** ժամանակագրությունը (XVIII դ.), «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ., էջ 489, «Ժամանակագրական մանր հատվածներ. ԻԶ.», «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ., էջ 527 և այլն:

43 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. III. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), խմբ.՝ **Մելքոնյան Ա.** և ուրիշներ, Եր., 2010, էջ 64:





Նկ. 5ա, բ. Վահրավարի (այժմ՝ Ագարակում) վիմագիրը. 1880 թ. (լսնկ. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, ՀՃՈՒ արխիվ, 2016 թ.)

Վասն 1880 դարուն / հացըն փութըն դառաւ / դասն մանէթ ուռուսաց / փող: Աստլոյած ազատէ, էլ չի / դեսնէք էսպէս հրաշքն: / Ես մեռնեմ դարնամ հող, այս / գիրըս մնայ յիշատա-կող. Մկրտիչ / Առաքէլեայն Մէլիք-Ախբերջանեանց[44]:

Վիմագիրն առաջին հերթին աչքի է ընկնում տեղական խոսվածքին բնորոշ բարբառային դրսևորումներով: Գրիչը, ըստ ամենայնի, հիշատակված Մկրտիչ Առաքելի Մելիք-Ախպերջանյանցն է, որին ծանոթ էին միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող գրիչների թողած հետևյալ տողերը՝ «ես մեռնեմ դառնամ հող, գիրս մնայ յիշատակող»: Սրա ավելի վաղ օրինակներից մեկն էլ պահպանվել է Տաթևի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 1532 թվակիր նվիրատվական վիմագրում. գրիչ Ներսես աբեղան արձանագրությունն այսպես է ավարտել. «....ձեռս փթի եւ հող դառնայ, գիր յիշատակ առ ձեզ մնա»[45]:

Արձանագրությունը, փաստորեն, այն ժամանակի աղետալի օրերի՝ սովի ու համատարած թանկության լուռ վկան է: Հացի փու-

44 **Մանուչարյան Ա.**, Հացի թանկության վիմագիր հիշատակություններ Մեղրու և Մարտունու շրջաններում, «Հայաստանի Հանրապետությունում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան» (զեկուցումների թեզեր), Եր., 1996, էջ 51, **Աբրահամյան Է.**, Սովի վկայությունը Վահրավարի վիմագրերից մեկում, «Վարձք», Եր., 2022, N 17, էջ 45:

45 ԴՀՎ, պրակ II, էջ 27, արձ. 47:

թի[46]՝ տասը մանեթ դառնալն ինքնին վկայում է կենսամթերքի կտրուկ թանկացման մասին, որն անուղղակիորեն գրիչը «հրաշք» է անվանում: Այն արձանագրվել է նաև «Մշակի» հաղորդագրություններից մեկում, ըստ որի՝ նույն՝ 1880 թ. Մեղրիից ահազանգում էին, թե «...թանգութեան պատճառով աւազակութիւնները օրըստօրէ բազմանում են»[47]: Անշուշտ, աղետի պատճառը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն էր՝ իր հետևանքային դրսևորումներով, նաև եղանակային անբարենպաստ պայմանները, որոնք ի վերջո հանգեցրին սովի: Պատերազմի ընթացքում խաթարվել էր պարենի մատակարարումը Ռուսաստանի հացառատ շրջաններից Անդրկովկաս, ամենուրեք ոչնչացվում կամ չէին մշակվում ցանքատարածությունները[48]: Ժամանակի մամուլում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել Վանի և Էրզրումի նահանգներում, ինչպես նաև Խնուսում, Սալմաստում, Իգդիրում, Նոր Բայազետում, Շուշիում և բազմաթիվ այլ բնակավայրերում գրանցված թանկության, սովի ու արտագաղթի մասին[49]: Կարելի է ասել, որ 1876–1880 թվականները հայ ժողովրդի պատմության մեջ մնացին որպես հերթական զրկանքների, կոտորածի ու սովի տարիներ, որոնց վկան նաև խնդրո առարկա վիմագրերն են:

Նախորդին ժամանակակից մյուս արձանագրությունը, որը փորագրված է 13–14–րդ դդ. թվագրվող Ջոլախաչի նիստերին, բովանդակությամբ առավել ընդգրկուն է. հիմնական մասը՝ 12 տող, թիկունքին է (նկ. 6ա–զ):





46 Ծանրության ռուսական միավոր փութը կշռում է 16 կգ 380 գ (տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, Եր., 1945, էջ 521):
47 «Մշակ», Թիֆլիս, 1880, 4 (16) ապրիլի, N 57, էջ 3:
48 Տե՛ս **Մանուչարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 51, **Աբրահամյան Է.**, նշվ. աշխ., էջ 44:
49 Մանրամասն տե՛ս **Աբրահամյան Է.**, նշվ. աշխ., էջ 44-45:





Նկ. 6ա–գ. Զոլախաչի արձանագրությունը՝ ցորենի, գարու, խոտի ու դարմանի թանկության հիշատակմամբ. 1880 թ.
(լսնկ.՝ Ս. Արևշատյանի, 2022 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

ԱՐԴԷՆ ԳՐԱԾԻՑՍ[Տ] ԱՌԱՋ ԿԱՐ ԽԼԱՂՍ. / ԱՄԻ ՀԱՋԱՐ ՈՒԹ ՀԱՐԻԼԻՅՐ ՈՒԹՍ/ՈՒՆԼԻՆ] / ԵՐԿԻՐՍ ԵՂԵՒ ՍԱՍՏԻԿ ԹԱՆԿՈՒ/ԹԻԼԻ]Ն, / ԵՕԹ ՄԱՆԷԹ ԾԱԽՎԵՑ ՄԻ ՓՈՒԴ ՑՈ/ՐԵՆ, / ԳԱՐՈՒ ԼԻՏՐ ՄԱՆԷԹ ԱՐԺՕՂՈՒԹԻՒՆ, / ԽՈՏԻ, ԴԱՐՄԱՆԻ ՓՈՒԴ՝ ՉՈՐՍ ՄԱՆԷԹ, / ՀԱՋԻՒ ԿԱՐԱՑԱՆ]Ք ԱՌՆԵԼ, ԹԷՊԷ/Տ /

ԵՂԻՑԻ ԳԻՐՍ ԸՆԹԵՐՁՈՂԻՆ ՁԴԷՏ, / Ի ԼԻ ԺԱՄՈՒՄ ԵՂԻՑԻ ԱՆԴԷՏ, / ՁԸՊԱԿԱՍԵՑՆԷ ՀԱՑ ԱՄԷՆ ԴԷՊ, / ՏԷՐ ՎԱՀԱՆ ՍԱՐԳԻՍՕՎ ԳՐԱ/ԳԷՏ / ՄԱԿԱՆՈՒԼԱՅՆԲ / ԲԱՐԷՊԱՇՏ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱԳԱՒՈ⌈Ր⌉ / ԱԶԱՏԵՑ ՍՈՎԻՑ ԱՇԽԱՐՀՍ ԲՈԼՈՐ[50]:

Նախ ուշագրավ է մասամբ չափածո վիմագրի առաջին տողը, որով գրիչը, որը, ըստ ամենայնի, **Գրագետ** մականվամբ Վահան Սարգիսովն է, ընթերցողին ծանուցում է խաչքար-կոթողի և իր փորագրած վիմագրի տարաժամանակյա լինելու մասին, այն է՝ վիմագիրը կազմելուց առաջ խաչը (խաչքարը) արդեն կար: Միաժամանակ գրիչը ցանկանում է, որ նեղ օրերին իր գիրն ընթերցողին «դետ», այսինքն՝ դիտելի, իսկ առատ ժամանակներում «անդետ» լինի (դիտող, կարդացող չունեցող), և հացը երբեք չպակասի: Բացի ցորենի, հետևաբար նաև հացի թանկության մասին հիշատակությունից՝ վիմագրում նշվում է նաև գարու, խոտի ու դարմանի (հարդի) գնաճի մասին, և եթե ցորենի փութն այստեղ տասի փոխարեն յոթ, ապա գարու լիտրը[51]՝ մեկ, իսկ խոտի ու դարմանի փութը չորս մանեթ էր: Սա վավերացվում է նաև «Մշակ»-ի համաժամանակյա մի հաղորդագրությամբ, ըստ որի՝ Նոր Բայազետում սաստիկ թանկացումներ են եղել. «....ալիւրի պուդը, որ առաջ ծախվում էր 50 կոպէկով, այժմ արժէ 2 ր. 60 կ. և բարձր»[52]: Այս հիշատակությունը հստակ պարզում է գնաճի չափը, այն է՝ մեկ փութը նախկին հիսուն կոպեկի փոխարեն դարձել էր յոթ մանեթ: Վիմագիրն ամբողջացվում է ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր (1855-1881) կողմից երկրի՝ սովից ազատման մասին հիշատակմամբ:

Այն, որ հացի սղության ու թանկության պատճառը նաև եղանակային անոմալ երևույթներն էին, վերահաստատում են դարձյալ մամուլի հաղորդագրությունները: Այսպես՝ 1882 թ. ապրիլի 2-ին Նոր Բայազետից հայտնում էին, որ տակավին ցուրտ է, ձյունն ու բքաբեր քամիները՝ անպակաս, Սևանա լիճը դեռ սառած է, ձկնոր-

50 **Մանուչարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 52:

51 *Լիտր* կշռային միավորը, ըստ տեղանքի, տարբեր մեծություն է ունեցել, օրինակ՝ Հայաստանում երևանյան լիտրը համարժեք էր 12 ռուսական ֆունտի կամ մոտ 5 կիլոգրամի: Ծանրության այս չափը վիմագրերում քանիցս վկայված է (Անի, Արթիկ, Ամբերդ, Սանահին և այլն), իսկ առավել բնորոշ զուգահեռները Վաղարշապատի 18-րդ դ. նվիրատվական վիմագրերում են, որոնց ավելի վաղ անդրադարձել ենք (տե՛ս **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 260-265, 340-341, արձ. 521-526, 680):

52 «Մշակ», 1880, 5 (17) մարտի, N 35, էջ 3:

սությունը՝ խափանված, իսկ «երկրագործները դեռ ոչինչ գործ չեն սկսել, ո՛չ ցանել, ո՛չ էլ հերկել են: Բայց դարձեալ նրանք յուսով ապրում են, վասն զի սոցա ցանք անելու ժամանակը կարող է լինել մինչև մայիսի սկիզբները»[53]: Կամ՝ 1883 թ. սեպտեմբերին դարձյալ Նոր Բայազետից գրում էին, որ «եղանակը շատ վատ է այստեղ. ամեն օր շարունակ բաւական անձրև է թափվում և խեղճ հողագործների ցորեն և գարի կալսելը այս պատճառով յետաձգվում է օրից օր»[54]: Իսկ 1895 թ. հունվարի 18-ին Նոր Բայազետից գրում էին, որ «մինչև այժմ այստեղ ձիւն չէ եկել և շատ չոր եղանակ է անում, որը շատ վնաս է աշնանացան արտերին: Բացի դրանից, ձիւն չը գալու պատճառով ամառը սարերում ջուր չի լինի անասունների խմելու համար, քանի որ մեր սարերում, ջուր չը լինելու պատճառով անասունները ջուր են խմում հալվող ձիւնից գոյացած լճակներում. եթէ այսպէս շարունակվի, թէ արտերի բոյսը և թէ արտերը վատ կը լինեն»[55]: 1916 թ. հունվարի 9-ի նամակում նշվում է դարձյալ Նոր Բայազետում գրանցված տարօրինակ եղանակային պայմանների մասին, մասնավորապես. «....ամբողջ 6 ամիս միալար չորութիւն, երաշտ: Սկսած խոտի հնձից մինչև այժմ ժողովուրդը ոչ անձրևի երես է տեսել և ոչ էլ մի կարգին ձիւն է եկել: .... Այսպիսի տաղտկալի և միապաղաղ չորային եղանակները, շատերի կարծիքով, անշուշտ վատ են ազդելու հողագործութեան վրա ապագայում, քանի որ երաշտի պատճառով աշնանացանը շատ տեղերում տեղի չունեցաւ, հողի փափկութիւնը և խոնաւութիւնը միայն կարող են միջոց տալ աշնանացանը անարգել կատարել: Եթէ գիւղացին միջոց չունենայ իր ցանքը իր ժամանակին անելու, ապա ուրեմն նա սովի դուռն է հասնելու....»[56]:

Բովանդակային առումով համանման է նաև **Արցախի Ասկերանի շրջանի Շոշ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու** կառուցման 1918 թ. վիմագիրը, որի վերջում գրիչը ցորենի թանկության մասին հիշատակություն է թողել[57] (նկ. 7ա, բ): Վեցտողանի վիմագիրն ամ-

53 «Մշակ», 1882, 8 (20) ապրիլի, N 58, էջ 1: Այս և հաջորդիվ հիշատակվող հաղորդագրությունների մասին մեզ տեղեկացնելու համար շնորհակալություն ենք հայտնում աղբյուրագետ Արմեն Ասատրյանին:
54 «Մշակ», 1883, 14 սեպտեմբերի, N 129, էջ 1:
55 «Մշակ», 1895, 28 յունվարի, N 11, էջ 3:
56 «Մշակ», 1916, 21 յունվարի, N 13, էջ 4:
57 Վիմագրի մասին տեղեկացնելու և լուսանկարը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում հնագետ, պ. գ. դ. Համլետ Պետրոսյանին:

փոփող ուղղանկյունաձև սալաքարն ագուցված է եկեղեցու հարավային մուտքի վերնամասում՝ արտաքուստ:





Նկ. 7ա, բ. Շոշի Ս. Աստվածածին եկեղեցու վիմագիրը. 1918 թ. (լսնկ.՝ Հ. Պետրոսյանի, 2019 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

Յիշատակ կառուցեց սլույրբ / եկեղեցիս Շուշվեցի Բաղ/դասար սլայրկաւայգն Աբարեանց / ու իր ընկեր Առուսդամ Գափ/իեան Խառադեալնյց, 1918 թ., / որ է ցորլեյնի փոթ էր 20 ղլուբլիյ:

Դատելով վիմագրի բովանդակությունից՝ եկեղեցու կառուցման նախաձեռնողներն էին ծագումով Շուշիից Բաղդասար սարկավագ Աբարյանն ու իր ընկեր Առուստամ Գափիյան-Խառատյանցը: Վերջում գրիչն արձանագրել է նաև կառուցման տարեթիվը՝ 1918 թ., միաժամանակ ակնարկել նաև ցորենի աննախադեպ թանկության մասին, ըստ որի՝ մեկ փութ ցորենն արժեր քսան ռուբլի (մանեթ):

Այն, որ երկրում հացի սղությունն ու թանկությունը հանգեցրել են սովի, վկայում է **ՀՀ Կոտայքի մարզի Զառ գյուղի** ձորում գտնվող մի ժայռաբեկորի հնգատող արձանագրությունը (նկ. 8ա, բ):



Նկ. 8ա, բ. Սովի և թանկության մասին վկայող վիմագիրը (լսնկ.՝ Գ. Սարգսյանի, 2010 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

ՅԱՅՍ ՋԱՂԱՑ ՇԻՆԷՅԻ ՍՈՎԻ ՏԱՐ/ԻՆ, ԱԲԷԹՆԱԿ ՄՀԷՐԵԱՆ, ՅԻՄ ՈՐԴԻ / ՍԱՐԳԻՍԻՆ ՅԻՇԱՏԱԿ, 1922 Թ.: ՄԻ ՀԱՒ/ԿԻԹ ՄԻ ՄԻԼՅՕՆ, ՀԱՅԻ ԳԻՆԸ (՞) / 2 ՄԻԼՅՕՆ ԿԷՍ[58]:

Վիմագիրը բնույթով շինարարական է և կազմվել է գյուղում ջրաղաց կառուցելու առիթով: Այլ հարց է, որ գրիչը, որը, ըստ ամենայնի, ոմն Աբեթնակ Մհերյանն է, ի հիշատակ իր որդի Սարգսի, շինարարությունն իրականացրել է մի այնպիսի շրջանում, երբ երկրում սով էր, ուստի գեղարվեստական պատկերավորմամբ վիմագիրն ավարտել է հավկիթի ու հացի (ցորենի) չափազանցված «գնացուցակով». հավկիթն արժեր մեկ միլիոն, հացը՝ երկուսուկես միլիոն: Սրանով գրիչը, ըստ էության, փորձել է շեշտել երկրում տիրող սաստիկ թանկությունն ու սովը, որին, բացառված չէ, որ զոհ է դարձել նաև իր որդի Սարգիսը:

Բ. Մորեխ

Թագւոր չունին, ժողուին առակ, / Իջնուն ահեղ անթիւ բանակ,
Եղուկ՝ ում գան անվարձ մշակ, / Հնձեն զամէն արտերն հսկակ (Մարախ)[59]*:*

Ներսես Շնորհալի

Երաշտի հետևանքային դրսևորումներից էր նաև մորեխների (վկայված նաև *մարախ*, *մելեխ*, *մելախ*, *ձեմրակ*, *խառնիձ*, *կիկուռ*, *չաքուրկա* և այլ անուններով) կտրուկ բազմացումն ու տարածումը, որն ինչպես մատենագրության, այնպես էլ ժողովրդական ավանդության մեջ քանիցս վկայված է[60]: Հատկանշելի է տեր Փիլիպոս Թեքիրտաղցու տաղերից մեկը՝ գրված 1708 թ. ապրիլի 15-ին Քիլիս քաղաքը պատուհասած մորեխների աղետի առիթով: Բավական ընդարձակ չափածո ստեղծագործությունը (ԽԱ տուն) հրատարակած արաբագետ Միհրան Մինասյանի բնորոշմամբ՝ տեր Փիլիպոսն այն-

58 Վիմագրի լուսանկարը սիրահոժար մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետ, պ. գ. թ. Գագիկ Սարգսյանին:

59 **Ներսէս Շնորհալի**, Հանելուկներ, առաջաբանը և քննական բնագիրը՝ **Ա. Մնացականյանի**, «Մատենագիրք Հայոց», հատ. ԻԱ., էջ 1288:

60 Մատենագրական սկզբնաղբյուրների հիման վրա մորեխների ակտիվացման երևույթին ավելի վաղ անդրադարձել է վիմագրագետ Գագիկ Սարգսյանը (տե՛ս **Սարգսյան Գ.**, Մորեխների արշավանքները, «Արտակարգ թերթ», Եր., 2004, N 9, էջ 1, 4, N 10, էջ 4): Վերջերս երևույթին անդրադարձել է նաև պատմաբան Միքայել Մալխասյանը՝ այն համարելով ցանքատարածությունների՝ տևական ժամանակ անմշակ մնալու հետևանք, քանի որ «….հողը մեկ ամբողջ տարի անմշակ թողնելը մորեխների կտրուկ բազմացման համար նպաստավոր պայման է» (**Մալխասյան Մ.**, նշվ. աշխ., էջ 194):

քան խորն է ազդվել շուրջ երեք ամիս տևած աղետից, որ տաղում մանրամասն նկարագրել է քաղաքի վիճակն ու մորեխների (բնագրում՝ մարախ) հասցրած վնասները. «Ծածկեալ եղեւ երեսս յօդոյն, / Եհեղ երկնից իբրեւ զձիւն, / Թռեաւ իջեալ մէջ սարերոյն, / Թաղեաց որդունք ի հող գետնոյն....»[61]: Նկատենք, որ մորեխների աղետը նույնպես ուղեկցվել է սովով, նաև գաղթով: Այն համեմատվել է օտար բռնակալների, մասնավորապես՝ Լենկ Թեմուրի արշավանքների հետ, և, որ ուշագրավն է, արաբ գրող, բնիկ հալեպցի Աբդուլ Ռահման ալ Քաուաքիբի (1849–1902) դիպուկ բնորոշմամբ՝ «Երեք են մայր ամենայն չարեաց՝ ոջիլը, թուրքը եւ.... մարախը»[62]:

Երկիրը պատուհասած մորեխների հիշատակմամբ վիմագրերը սակավաթիվ են: Դրանցից մեկը վկայված է **Արցախի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի Ս. Գրիգորիս եկեղեցու** արևմտյան մուտքի բարավորին, ըստ որի՝ եկեղեցին կառուցվել է դառն ու նեղ մի շրջանում՝ 1673 թ., երբ ողջ Աղվանից երկիրը պատուհասել էին մորեխները (վիմագրում՝ մարախ) և ոչնչացրել արտերը (նկ. 9ա, բ):



Նկ. 9ա, բ. Մորեխի տարածման մասին Հերհերի Ս. Գրիգորիս եկեղեցու վիմագիրը. 1673 թ. (լսնկ.՝ Գ. Բուդաղյանի, 2022 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

61 **Մինասեան Մ.**, Տէր Փիլիպոս (Փիլիպպէ) Թեքիրտաղցի ու իր տաղերը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2011, N ԼԱ., էջ 475:
62 Նույն տեղում, էջ 474:

ՋՕՐՈՒԹԼԵԱՄՅԲՆ ԱԼՍՈՒԾՈՅՑ, ՇԻՆԵՑԱՒ ՍԲ ԵԿԼԵՅՂԵՑԼԻՅՍ Ի ԴԱՌՆ ԵՒ Ի ՆԵՂ ԺԱՄԱՆԼԱՅԿԻՍ. ՎԼԱՅՍԼՆ ԾՈՎԱՑԵԱԼ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ԵԿՆ ՄԱՐԱԽ, ԵԿԵՐ ՋԵՐԿԻՐՍ ԱՂՎԱՆԻՑ ԵՒ ԱՒԵՐԵՑ ԲԱ-ՋՈՒՄ ՏԵՂԻՍ... ԹՎԻՆ ՌՃԻԲ. (1673)[63]:

Բնույթով շինարարական վիմագիրը պատմագիտական մեծ արժեք ունի, որում հիշատակված է ոչ միայն եկեղեցու շինարարության փաստը, այլև այն, թե ինչ պայմաններում է այն կատարվել: Նույն եկեղեցու հարավային մուտքի վիմագիրն էլ պարզում է շինարարության սկիզբն ու ավարտը՝ 1667–1676 թթ., և այն, որ եկեղեցին կառուցվել է իբրև հովարան (ամառանոց) Ամարասի միաբանության համար:

Դեռևս 17-րդ դարասկզբին Հայաստանի կենտրոնական շրջաններում մորեխների ակտիվացման մասին է վկայում Առաքել Դավրիժեցին: Պատմագրի հաղորդմամբ՝ աղետն ուղեկցվել է հացի սղությամբ ու սովով. «....յորոյ յետագայ եղև սով սաստիկ և բնաւին ոչ երևիւր հաց և կերակուր և այլ ինչ ուտելի»[64]: Սրանով պայմանավորված՝ Միքայել Մալխասյանը 1606–1609 թթ. մեծ սովի հիմնական պատճառներից մեկը համարում է «16–17-րդ դարերի սահմանագլխին եղանակային պայմանների փոփոխությունը և մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը»[65]:

Մորեխների հասցրած վնասների ու դրանցից ազատվելու ծիսակատարության վկայությամբ մի ուշագրավ վիմագիր է հայտնի պատմական **Երնջակ գավառի Ջուղա գյուղի Ս. Գևորգ եկեղեցուց** (նկ. 10ա, բ): 1867 թվակիր ընդարձակ արձանագրությունը (15 տող) ամփոփող քարը, որն ագուցված է եղել հիշյալ եկեղեցու հարավային մուտքի վերնամասում, նախիջևանյան մշակութային ժառանգության հետ 1998–2006 թթ. ոչնչացվել է Ադրբեջանի պետականորեն իրագործած մշակութային եղեռնի հետևանքով: Բարեբախտաբար, վիմագիրը ժամանակին լուսանկարել, վերծանել ու հրատարակել է նախիջևանագետ Արգամ Այվազյանը: Մենք այն վերընթերցել ու ծանոթագրել ենք:

---

63 ԴՀՎ, պրակ V. Արցախ, կազմեց՝ **Բարխուդարյան Ս.**, Եր., 1982, էջ 165, արձ. 571:
64 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ **Լ. Խանլարյանի**, Եր., 1990, էջ 108:
65 **Մալխասյան Մ.**, նշվ. աշխ., էջ 176:



Նկ. 10ա, բ. Մորեխների բազմության և դրանց դեմ պայքարի մասին վկայող վիմագիրը. 1867 թ.
(լսնկ.՝ Ա. Այվազյանի, 1987 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

1867 ԱՄԻ, 10 ՄԱՅԻՍԻ / ԵՂԵՒ ՄԵԾ, ԶԱՐՄԱՆԱԼԻ ՄՈՐԵԽ / ՎԼԱՅԼՆ՝ ՄԵՐ ՄԵՂԱՅՆ, ՄԵՆՔ ԷԼ ԸՍ/ԿՍԵՅԻՆՔ ԿՈՏՈՐԵԼ, ԲԱՅՅ ՈՐ/ՔԱՆ ՄԵԼՆ՝Ք ԿՈՏԼՈՐԵՅԻՆՔ, ՆՈՔԱ ԲԱԶՄԱ/ՅԱՆ, ԼՅԵՏՈՅ ՏԵՍԱՆՔ, ՈՐ ՃԱՐ ՉՈՒՆԻ, / ԴԱՌՅԱՆՔ ԴԷՊ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԱՂԱՉԵԼ, / ՄԱՏԱՂ ԱՆԵԼ, ՍԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒ/ՅԱՆԵԼ, ԱՆԴԱՍՏԱՆ ԱՆԵԼ, ԻՍԿՈՅՆ / ԱՍՏՈՒԱԾԻՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԹՌՉՈՒՆՔ ԵՐ/ԿՆԻՅ ԹԱՓԵՅԱՆ, 3 ՕՐՎԱ ՄԷՋ ԱՄԷՆ / ՄՈՐԵԽՆ ԸՍՊԱՌԵՅԻՆ: ԵՒՍ ԱՅՆ / ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՂԵՒ ՍՂՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԻ. ՅՈՒԼԵՅՆԻ / ԼԻԴՐՆ 2 ՄԱՆԷԹ, ԿՕՐԷԿՆ՝ ՄԱՆԷԹ ԿԷՍ, / ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԳԱԼՈՒՍՏԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՅ[66]:

Զուղա գյուղի Ս. Գևորգ եկեղեցին հակիրճ նկարագրել է Ս. Էջմիածնի միաբան Արիստակես եպս Սեդրակյանը, որի հաղորդմամբ՝ «Նոր շինուած գիւղի հիւսիսային ծայրին է այս եկեղեցին յանուն Ս. Գէորգայ, հին Ս. Գէորգ եկեղեցւոյ պատուոյ համար, որոյ աւերակներն առաջին Զուղայի մէջն են....»[67]: Համանման տեղեկություններ է հաղորդում նաև Հ. Ղևոնդ Ալիշանը, սակայն նրանք արձա-

66 **Այվազյան Ա.**, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հատ. Ա. Զուղա, Եր., 2004, էջ 155, արձ. 1037:
67 **Սեդրակեան Արիստակէս վրդ.**, Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղարշապատ, 1872, էջ 153:

նագրությունը չեն հիշատակում[68]: Արդեն նախորդ դարի 80-ականներին եկեղեցին անմխիթար վիճակում էր. պահպանված մի լուսանկարում տեսանելի են հարավային մուտքի երկու կողմերում ագուցված խաչքարերը, որոնք, ըստ Ա. Այվազյանի, Հին Ջուղայի գերեզմանոցից են բերվել ու ագուցվել եկեղեցու շարվածքում[69]:

Դառնալով արձանագրությանը՝ նախ ասենք, որ այն կարևորվում է մի քանի առումներով՝

ա. մորեխների տարածման մասին հիշատակությամբ,

բ. տարբեր եղանակներով մորեխների տարածումը կանխելու՝ կոտորել, աղոթել, պատարագ մատուցել, մատաղ ու անդաստան անել,

գ. Աստծու ողորմությամբ մորեխների ոչնչացման,

դ. հետևանքների, ի մասնավորի՝ հացի սղության,

ե. թանկության՝ ցորենի և կորեկի գնաճի վկայությամբ:

Վերը նշեցինք, որ երաշտի ուղղակի հետևանք հանդիսացող մորեխների, թրթուրների և վնասատու այլ միջատների ակտիվացման երևույթը մատենագրական սկզբնաղբյուրներում քանիցս վկայված է, ուստի վիմագիրը մեծապես կարևորվում է իբրև տարերային աղետի մասին վկայող քարեղեն վավերագիր: Ժամանակաշրջանի առումով խիստ ուշագրավ է Դավիթ վրդ. Տեր-Դավթյան Ուլնեցու 1867 թվակիր հաղորդումն առ այն, որ Քիլիս քաղաքի հայերը դեռևս դրանից ութ տարի առաջ քանդել էին իրենց հին եկեղեցին ու վարժարանը՝ նորերը կառուցելու նպատակով, սակայն «....այն տարիէն մինչև ցայսօր մարախը ամէն տարի կու գայ սոսկալի բազմութեամբ և ցանածնին կուտէ, հետեւաբար սովու և սղութեան մէջ իյնալով, վարժարաննին և եկեղեցինին մնացած են կիսկատար, իրենք ալ յետին խեղճութեան մէջ, ծանր տուրքերու ներքև ճնշուելով՝ յուսահատութեան մէջ ինկած են»[70]: Այսինքն՝ աղբյուրները, մեկը մյուսին լրացնելով, վկայում են առնվազն 1859 թվականից ի վեր Նախիջևանից մինչև պատմական Դաշտային Կիլիկիայի հարավային շրջաններն ընդգրկած մորեխների աղետի պատճառած վնասների մասին:

---

68 Տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 427:

69 Տե՛ս **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 153-154:

70 **Տէր-Դաւթեանց Դաւիթ վրդ. Ուլնեցի**, Ստորագրութիւն այցելութեան, «Արշալոյս Արարատեան», Զմիւռնիա, 1867, 24 յունիս, N 808: Տե՛ս նաև **Մինասեան Մ.**, նշվ. աշխ., էջ 487, ծնթ. 20:

Մորեխների արագ տարածումն ու արտերին հասցրած վնասները կանխող միջոցառումների շարքում նշելի են հատկապես ծիսական, սնոտիապաշտական հենք ունեցող սովորույթները: Նախքան դրանց մասին խոսելը նկատենք, որ գրականության մեջ հանդիպում են նաև *մորեխակոռ* և *մորեխապտեղ* տերմինները, որոնք բացատրվում են իբրև «մորեխը կոտորելու համար հարկադիր աշխատանք (կոռ) մորեխն իջած տեղում, երբ չափահաս մարդիկ, առանց սեռային խտրականության, լծվում են մորեխը կոտորելու գործին»[71]: Այս առնչությամբ վիմագրում նշվում է, որ «....որքան մենք կոտորեցինք, նոքա բազմացան», որից հետո դիմել են Աստծու ողորմությանն ու ծիսակատարություններին:

Մխիթար Գոշի առակներից մեկը բովանդակում է Աստծու հրամանով մորեխների հասցրած վնասների և դարձյալ Աստծու ողորմությամբ տարմ կոչվող թռչունների միջոցով նույն այդ մորեխներից ազատվելու մասին պատմությունը. «Մարախ, զաւր անուանի Աստուծոյ, զի նորին հրամանաւ ժողովի ապականել զերկիր, եւ նորին ակնարկութեամբ առաքի տարմ ի ջնջել զնա»[72]: Տարմը կամ տարմահավը երգեցիկ թռչուն է, որը սնվում է միջատներով և առավել հայտնի է իբրև մորեխներ որսացող-ոչնչացնող թռչուն[73]: Այս տեսանկյունից հիշյալ առակը քննվող վիմագրի միջնադարյան լավագույն նախօրինակը կարող է համարվել՝ նկատառելով վնասատու մորեխներին Աստծու ողորմությամբ թռչունների միջոցով ոչնչացնելու հանգամանքը[74]: Մորեխների բազմության ու տարմ թռչունների կողմից դրանց ոչնչացման մասին մի ուշագրավ դրվագ է ներկայացնում նաև Կիրակոս Գանձակեցին, որն աղետից ազատվելը նույնպես վերագրում է Աստծու բարեգթությանը: Իր պատմության ԾԶ՝ «Վասն մարախին, որ եկեր զաշխարհս» գլխում Գանձակեցին մանրամասն նկարագրում է 1252 թ. Պարսկաստանից ներթափանցած մորեխների տարափը, որոնց բազմությունն այնքան մեծ է եղել, որ վեր բարձրանալիս արևը ստվերել է: Մորեխները ոչնչացրել են ողջ

71 **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, Եր., 1944, էջ 359:

72 «Առակք **Մխիթարայ Գոշի**», աշխատասիրութեամբ՝ **Էմ. Պիւզեանի**, առաջաբանը՝ **Օ. Վարդազարեանի**, «Մատենագիրք Հայոց», հատ. Ի., ԺԲ. դար, գիրք Բ., Եր., 2014, էջ 95, N ՃԾԸ.:

73 Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, էջ 388:

74 1401 թվակիր մի ձեռագրի հիշատակարանի համաձայն՝ Ոշտունյաց ծովում (Վանա լճում) աստվածային ողորմությունը վրա հասավ և մորեխների ողջ բազմությունը կոտորեց, «....զոր ալիք ծովուն դէզադէզ, իբր զշիղջս աւազաց, յեզրն կուտեաց....» («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԵ. դար», մասն Ա. (1401-1450 թթ.), կազմեց՝ **Խաչիկյան Լ.**, Եր., 1955, էջ 3, N 1):

Վէմ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 1 (81), հունվար-մարտ, 2023

բուսականությունը, ծածկել քար ու հող, ինչի հետևանքով երկրում հացի սղություն է առաջացել ու շարունակվել նաև 1253 թ. գարնանը: Մարդիկ փորձել են լքել իրենց տները, «....զի յառաջագոյն կերեալ էր զշրջակայ գաւառսն՝ սկսեալ ի Սպանիոյ, և յԱսիոյ, և ի Պարսից և ի Միջագետաց....»[75]: Դիմել են նաև Աստծու բարեխոսությանը, «....որ յոչէէ գոյացոյց զարարածս և ողորմութեամբ իւրով խնամէ զսոսա միշտ.... իսկ ողորմածն Աստուած խիստ վիրացն ետ սպեղանիս արագ...., քանզի եկն բազմութիւն մանր հաւուցն պիսակաց, զոր վասն բազմութեանն տարմ անուանեն սովորաբար, և կարգ կալեալ յեզերացն, առ հասարակ սպառեալ եկեր զամենայն բազմութիւն մարախոյն, այնքան, զի և մի ոչ գտանիւր»[76]:

Ազգագրագետ Երվանդ Լալայանի հաղորդմամբ՝ Հայաստանի հյուսիսում լայն տարածում է ունեցել ջրի պաշտամունքը, որի առնչությամբ ծիսակատարության մի քանի օրինակ է հիշատակում: Դրանցից մեկը հացահատիկի հյութը ոչնչացնող «բողոծ» (սև բլոջ) կոչված միջատների բազմացման դեմ է, ինչի համար գյուղացիները Չարդախլու գավառի մի ժայռափոր սուրբ աղբյուրի մոտ մոմ են վառում, երկրպագում, ապա ջուր են բերում ու դնում եկեղեցու սուրբ սեղանին, որից հետո «քահանան վերցնում է այդ եւ բոլոր գյուղացիների հետ շրջում արտերը, անդաստան կատարում և ջուրը սրսկում արտերին: Իսկույն այդ «բողոծները» կոտորվում են եւ կամ թռչում հեռանում են»[77]: Առավել ուշագրավ է արտերը պատուհասած մորեխների բազմացման դեմ կատարվող արարողությունը, ըստ որի՝ Ակոռիի Ս. Հակոբավանքի աղբյուրից ջուր են բերում, անդաստանի ծիսակարգ անում, արտերը սրսկում, և «իսկոյն երևում են սև ժեռ կոչված թռչունները, որոնք կոտորում են մորեխներին»[78]: Ակնհայտ է, որ ծեսի մեջբերված հատվածն ուղղակիորեն վավերացնում է վերոնշյալ վիմագրում վկայված արարողության ընթացակարգը, այն է՝ սեփական ուժերով մորեխների դեմ պայքարը ձախողելուց հետո գյուղացիները դիմում են Աստծուն, աղոթք անում,

75 **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 360:
76 Նույն տեղում, էջ 360-361:
77 **Լալայան Ե.**, Բորչալուի գաւառ. Ձրի պաշտամունք, էջ 196:
78 Նույն տեղում: Համանման է նաև Նոր Բայազետի Ս. Հովհաննես սրբավայրի մոտ գտնվող աղբյուրից ջուր վերցնելու և մկներից կամ մորեխներից արտերը պաշտպանելու մասին ավանդությունը (տես **Լալայեան Ե.**, Նոր-Բայազէտի գաւառ. Ձրի պաշտամունք, «Ազգագրական հանդէս», գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 87):

պատարագ մատուցում, մատաղ ու անդաստանի ծիսակարգ անում, որից հետո տեղի է ունենում սպասելին, այն է՝ թռչունների (տարմահավերի) երամները երեք օրում ուտում-սպառում են մորեխների ողջ բազմությունը: Այդ թռչուններին հաճախ նույնացնում են սարյակների հետ, և պատահական չէ, որ լոռեցիների համար սարյակը սուրբ թռչուն է[79]:

Երաշտը, սաստիկ շոգը և եղանակային այլ անոմալիաներ, նաև մորեխների բազմացումը, ինչպես տեսանք, մշտապես ուղեկցվել են թանկությամբ ու սովով: Այս առումով խնդրո առարկա վիմագիրը ևս վկայում է աղետի հետևանքով առաջացած հացի սղության մասին, երբ ցորենի լիտրը դարձել էր 2, կորեկինը՝ 1,5 մանեթ (ռուսական դրամ): Մատենագրությունից հայտնի են համանման այլ օրինակներ ևս: Այսպես, 1401 թ. Խիզանում ընդօրինակված Ավետարանի գրիչ Զաքարիայի հաղորդմամբ, երկրում «վասն ծովացեալ մեղաց»[80] պանդխտություն սկսվեց. «....և եկն մարախ (մորեխ – Ա. Հ.), և եղև սով սաստիկ ընդ ամենայն երկիր, որ բերէր կապիճ (մեկ գրիվի տասներորդ մասը – Ա. Հ.) հացն Մ. (200) դրամ....»[81]: Կամ՝ 1419 թ. Ցիպնայի վանքից Գրիգոր գրիչը վկայում էր, որ երկիրը պատուհասեցին մորեխները. «....և թանձրախիտ ծածկեաց զդաշտ և զլերինս, զսար և զձոր.... կերաւ շատ վաստակ ի բազում տեղիս, յորմէ սասանեցան մարդիկք, և եղև սղութիւն»[82]: Կամ՝ Աղվանքից հայտնի 1420 թվակիր մի ձեռագրում կարդում ենք, որ յոթ տարի մորեխներն ավերել-ոչնչացրել են աշխարհը. «....վասն մեղաց մերոց Է. (7) ամ է, որ մարախ զամենայն աշխարհ աւերեաց, և դեռևս եմք ի կասկածի....»[83]: Իսկ Եղվարդում «Գիրք հարցմանց»-ի ընդօրինակումն սկսած և Ռշտունիքի Անձնապատի վանքում ավարտած Թումա գրիչը դրա հիշատակարանում մանրամասն նկարագրում է երկիրը պատուհասած աղետը՝ մորեխների ու խառնիճների կտրուկ աճը, որի հետևանքով «էկեր զամենայն խոտ և աչառեաց և սպառեաց զամենայն վաստակ սերմանեալ, նուաղէն անասունք, լքեալ դա-

79 Տե՛ս **Գասպարյան Գ.**, **Գրիգորյան Ա.**, **Հակոբյան Ա.** և ուրիշներ, Հայոց լեզվի բարբառային բառարան, հատ. Բ. (Է-Ծ), Եր., 2002, էջ 157:

80 Վերահաս դժբախտությունները մեղքերով ու աստվածային ցասմամբ պայմանավորելու մասին տե՛ս մեր հոդվածաշարի երկրորդ մասում (էջ 187-188):

81 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԵ. դար», մասն Ա., էջ 8, N 5:

82 Նույն տեղում, էջ 225, N 246:

83 Նույն տեղում, էջ 240, N 264: Հմմտ. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ժէ. դար», մասն Բ. (1621-1640 թթ.), կազմեց՝ **Հակոբյան Վ.**, **Հովհաննիսյան Ա.**, Եր., 1978, էջ 1, N 1:

տարկեցան երկրագործք ի վաստակելոյ, խցեալ կալնուին զերդ և զպատուհան ի ներքս լինելոյ նոցա: Մինչ զի զերդս պահէին աւելելով կամ մաղ ի վերայ դնելով....»[84]: Հետագա դարերի ժամանակագրություններից մեկում Ամիդի Չնքշո Ս. Աստվածածին վանքի առաջնորդ Գասպար վարդապետը հաղորդում է, որ «թվին ՌՄԻԷ. (1778) բազում չաքուրկայ (մորեխ – Ա. Հ.) և կարկուտ էկաւ. կարի դժուար, սով սաստիկ եղաւ....»[85]: Իսկ 1872 թ. Ալեքսանդրապոլում երկու ամիս անձրև չէր տեղացել. «Ծերունիք խիստ վշտացած են, նոքա ասում են, որ այս տարուայ պէս շոգ և թանգութիւն տեսած չեն: Հացը և միւս ուտելիքները շատ թանգ են: Ես տեղեկացայ, ալիւրի փութը աժէ 1 ռ. 20 կ.»[86]: Աղետը կանխելու համար նրանք «Տիրամոր յոթ վերքը» սրբապատկերը շարունակ պտտել են գյուղերում ու ապավինել սրբությանը[87], ինչպես ավելի վաղ արվել էր Ջուղայում՝ «....ունելով բարեխօս զՍբ Ստեփանոս Նախավկայն»[88]:

Տպավորիչ է նաև Կարին-Թեոդոպոլսում 1314 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում Սարգիս գրչի՝ մորեխների բազմության պատկերավոր նկարագրությունը, ըստ որի՝ «վասն մեղաց մերոց» վնասաբեր այդ միջատները տասն օրվա ճանապարհը մեկ օրում էին անցնում. «....զտասն աւուր ճանապարհն ի մի օրն անցանէր....»[89]: Ավելին՝ մորեխներն այնքան շատ էին, որ ոչ ոք չէր կարող տեսնել նրանց բարձրությունը, և մինչև անգամ «....ի թանձրութենէ նորա փոխիւր գոյն Արեգականն, գոչէր՝ իբրեւ զգետ, եւ անցանէր՝ իբրեւ զքամի....»[90]:

Չմոռանանք նշել, որ խնդրո առարկա վիմագրի վերջում գրիչը, որն իր անունը համեստորեն չի արձանագրել, Աստծուց մի «ողորմի» է հայցում ոմն Գալուստի և նրա ծնողների համար: Ենթադրելի է, որ նրանք տարերային աղետի զոհ են դարձել, քանի որ, ինչպես

84 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԵ. դար», մասն Գ. (1481-1500 թթ.), կազմեց՝ **Խաչիկյան Լ.**, Եր., 1967, էջ 354, N 473: Հմմտ. **նույնի**՝ հատ. Ա., էջ 301, N 314:

85 «Ժամանակագրական մանր հատվածներ», «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ., էջ 528:

86 «Նամակ Ալէքսանդրապօլից», «Մշակ», 1872, 27 յուլիսի, N 29, էջ 3:

87 Տե՛ս **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 108:

88 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ. դար», մասն Ա. (1601-1620 թթ.), կազմեցին՝ **Հակոբյան Վ.**, **Հովհաննիսյան Ա.**, Եր., 1974, էջ 8, N 8:

89 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար», մասն Ա. (1301-1325 թթ.), կազմողներ՝ **Խաչիկյան Լ.**, **Մաթևոսյան Ա.**, **Ղազարոսյան Ա.**, Եր., 2018, էջ 261, N 242: Հմմտ. **Հարությունյան Խ.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր., 2019, էջ 290-291:

90 Նույն տեղերում:

տեսանք, բնության աղետները, որպես կանոն, ուղեկցվել են հացի սղությամբ, սովով ու համաճարակներով:

Հետաքրքիր է, որ տարմահավերի՝ մորեխներին ոչնչացնելու առաքելությունն արտացոլվել է նաև ժողովրդական ավանդության մեջ: Հ. Ղևոնդ Ալիշանի և մի շարք այլ տեղագիր-ուսումնասիրողների (Հ. Թաթարյան, Մ. Սմբատյանց, Ս. Ձելինսկի, Մ. Վագներ, Ի. Բերեզին, Գ. Ղափանցյան և այլք) հաղորդմամբ՝ Մասիսի ստորոտին գտնվող Ակոռիի Ս. Հակոբավանքի աղբյուրի ջուրը հայտնի էր «մարախահար» անդաստանները բժշկելու զորությամբ, ինչով պայմանավորված՝ ուխտավորներն աղբյուրից ջուր էին տանում հեռավոր գավառներ, «ուր հարուածք մարախոյ լինէին, և սփռէին յանդաստանս. և անդէն իջանէին մարախակորոյս տարմահաւք՝ վարդագոյն և սպիտակաթիկունք (Sturnus roseus). ի ռամկաց կոչեցեալ Ս. Յակոբայ դուշ (թռչուն)»[91]: Տեղեկություն կա նույնիսկ այն մասին, որ Կիպրոսի Հակոբ թագավորը 1473 թ. երկու հայ է ուղարկել Ս. Հակոբավանքի աղբյուրը՝ իր երկրի համար «մարախահալած» ջուր տանելու[92]:

Ակոռիի 1840 թ. երկրաշարժի և Երևանը 1848 թ. պատուհասած մորեխների աղետի վկայությամբ մի ուշագրավ վիմագիր է պահպանվել **ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Ս. Հակոբ եկեղեցու** հյուսիսային մուտքի աջակողմյան հատվածում (նկ. 11ա, բ):



Նկ. 11ա, բ. Ակոռիի երկրաշարժի և Երևանի մորեխների աղետի մասին վկայող վիմագիրը. 1848 թ.
(լսնկ. և գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

ԿՈՐՁԱՆՈՒՄՆ / ԱԿՈՌԻ, 1840: /
ՄՈՐԵԽ ԵԿԱՒ ԵՐԷԻ/ԱՆ, 1848 ԷՐ[93]:

91 **Ալիշան Ղ.**, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 470: Հմմտ. **Սիմոնյան Լ.**, Ս. Հակոբ Մծբնա հայրապետի հիշատակը հայոց մեջ, Եր., 2022, էջ 82-84:
92 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 470:
93 **Սիմոնյան Լ.**, նշվ. աշխ., էջ 89:

Տեղին է նկատել վիմագրագետ Սուրեն Սաղումյանը՝ նշելով, որ Ակոռիի երկրաշարժը «այնպես խոր նստեց մարդկանց գիտակցության մեջ, որ Կումարիսի (Գյամրեզ) եռանավ բազիլիկի հյուսիսային որմին ևս հիշատակագրվեց այս դժխեմ եղելությունը»[94]: Չմոռանանք, որ Ակոռիի երկրաշարժը հիշատակված էր նաև Մայակովսկի (Շահապ) գյուղի եկեղեցու վիմագրերից մեկում:

Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ արք. Սմբատյանցը Երևանը, Վաղարշապատը և հարակից այլ բնակավայրեր երաշտից զերծ պահելու հավատով 1870 թ. ուխտագնացության է մեկնել Ս. Հակոբավանք՝ աղբյուրից ջուր բերելու, անդաստանի կարգ անելու նպատակով: Ուխտագնացությունը նկարագրելիս Սմբատյանցը նշում է, որ ականատես է եղել դեռևս 1847 թ. և հետագա տարիներին գրանցված թրթուրների, մորեխների տարածման և նման այլ աղետաբեր երևույթների, որոնք կանխվել են Ս. Հակոբավանքի աղբյուրի սուրբ ջրով. «....վասն զի մարախի տարածման միջոցին՝ երբ այն սուրբ ջրէն տանին ուր և իցէ, [գալիս են – Ա. Հ.] ահագին բազմութեամբ թռչնոց երամք, որոց տեսակն առ հասարակ Հայաստանի մէջ՝ «Ս. Յակոբայ դուշ» անուանեն....»[95]: Անշուշտ, վերոնշյալ վիմագիրը Սմբատյանցի հիշատակած մորեխների տարածման երևույթի քարեղեն ապացույցն է:

Հիշյալ վիմագրին ժամանակամերձ մի հիշատակություն էլ Ս. Հայկունին է ավանդում, ըստ որի՝ 1849 թ. Իգդիրից ոչ հեռու՝ Կուլաբ գյուղում, մորեխների սաստիկ հարձակում է եղել, որը «....ամբողջ արտերն ոչնչացուցած է. ամպի նման երկինք պատած և արեգական լոյսն խաւարեցուցած է: «Սուրբ Յակովբայ սարեկն» եկած՝ սպառած է ամբողջ մարախն»[96]:

Մորեխների բազմությունն աղոթքով ոչնչացնելու մասին է վկայում նաև **Բերդի Ս. Սարգսի խաչ կոչվող գերեզմանոցի** տապանագրերից մեկը, որը ժամանակին գրի է առել ազգագրագետ Դերենիկ Վարդումյանը (նկ. 12): Վերծանությունը ներկայացնում ենք ըստ նրա դաշտային օրագրի:

---

94 **Սաղումյան Ս.**, «Շարժ եղեւ», «Հուշարձան» տարեգիրք, հատ. Բ., Եր., 1993, էջ 4:
95 **Մեսրովբ վրդ. Սմբատեանց**, Սուրբ Յակոբայ ջուր, «Արարատ», Ս. Էջմիածին, 1870, N Զ., էջ 193: Հմմտ. **Սիմոնյան Լ.**, նշվ. աշխ., էջ 82-83:
96 **Հայկունի Ս.**, նշվ. աշխ., էջ 363:


ԱՅՍ ՏԱՊԱՆ ՍՐԲԱԿՐՈՆ ՏԷՐ ԱՆԱՆԻԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ-
ՍՈՒՔԻԱՍԵԱՆ ՈՐ Ի ԾԵՐՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՒՄ ԱՂՕԹԻՒՔ ԵԿԵԱՂ
ՄՈՒՐԵԽՆ ՅԵՏ ԴԱՐՅՐՈՒՅ ԱՅՍ ԳԱՒԱՌԻ ՅԱՆԴԵՐԻՅ:

150 ԱՄԱՅ ՀԱՍԱԿՈՒՄ ՎԼԱԽՃԱՆԵՅԼԱՅԻ 1845 ԱՄԻ 5Ն ԱՊՐԻԼ
ԳԱՆԳՆԵՅԻՆ ՏԱՊԱՆՍ ԻՒՐ ԹՈՌՆԵՐ ՄԱՐՏԻՐՈՍ ԱԼԵՔ
ՍԱՆԴՐ ԵՒ ՓՐԻԴՕՆԸ ԻՒՐԵԱՆՅ ՊԱՊԻՆ ՅԻՇԱՏԼԱԿ 18 1/15 91

Նկ. 12. Տեր Անանիա քահանայի տապանագրի ընդօրինակությունը (Դ. Վարդումյանի դաշտային օրագրից, 1958 թ.)

Տապանաքարի հյուսիսային նիստին՝ 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՐԲԱԿՐՕՆ ՏԷՐ ԱՆԱՆԻԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ- / ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, ՈՐ Ի ԾԵՐՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՒՄ ԱՂՕԹԻՒՔ ԵԿԵԱՂ / ՄՈՒՐԵԽՆ ՅԵՏ ԴԱՐՅՐՈՒՅ ԱՅՍ ԳԱՒԱՌԻ ՅԱՆԴԵՐԻՅ:

Հարավային նիստին՝ 3 տող.

150 ԱՄԱՅ ՀԱՍԱԿՈՒՄ ՎԼԱԽՃԱՆԵՅԼԱՅԻ 1845 ԱՄԻ, 5-Ն ԱՊՐԻԼԻ / ԳԱՆԳՆԵՅԻՆ ՏԱՊԱՆՍ ԻՒՐ ԹՈՌՆԵՐ՝ ՄԱՐՏԻՐՈՍ, ԱԼԵՔ/ՍԱՆԴՐ ԵՒ ՓՐԻԴՕՆԸ ԻՒՐԵԱՆՅ ՊԱՊԻՆ ՅԻՇԱՏԼԱԿ, 15.1.1891[97]:

Ընդօրինակությունից դատելով՝ տապանաքարն օրորոցաձև է, և արձանագիր են երկու լայն նիստերը: Ննջեցյալը Անանիա քահանա Տեր-Սուքիասյանն է, որը վախճանվել է զառամյալ տարիքում (թերևս վրիպակ կամ չափազանցություն է 150 տարի ապրած լինելը)՝ 1845 թ. ապրիլի 5-ին, իսկ նրա տապանաքարը կանգնեցվել է ավելի ուշ՝ 1891 թ. հունվարի 15-ին, թոռների՝ Մարտիրոսի, Ալեքսանդրի և Փիրիդոնի կողմից: Տարիներ են անցել, բայց սրբակրոն քահանան սերունդների հիշողության մեջ մնացել է իր հրաշագործ աղոթքներով, որոնց զորությամբ հետ է մղել անգամ գավառի հանդերը պատուհասած մորեխներին (վիմագրում՝ մուրեխ):

Ամփոփելուց առաջ ներկայացնենք երկրաշարժի վկայությամբ ևս երկու վիմագիր, որոնք դուրս են մնացել հոդվածաշարի առաջին մասից: Դրանցից մեկը հայտնաբերվել է 1988 թ. հնագետ Հայկ Եսայանի ղեկավարած **Տավուշ ամրոցի Ս. Աստվածածին եկեղե-**

97 **Վարդումյան Դ.**, Բերդ. տապանագրեր (1958 թ. սեպտեմբեր), ՀԱԻ արխիվ, Դ. Վարդումյանի ֆոնդ, գ. 150:

ցու պեղումների ժամանակ: Հնգատող վիմագիրը, որը, ըստ ամենայնի, վերծանել է վիմագրագետ Սուրեն Սաղումյանը, ներկայումս ցուցադրվում է Բերդի պատմության և կենցաղի թանգարանում (նկ. 13ա, բ):



Նկ. 13ա, բ. Գանձակի երկրաշարժի վկայությամբ վիմագիրը. 1141=1139 թ. (լսնկ.՝ Տ. Ալեքսանյանի, 2021 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

Ի :ՃԻ: (120) ԹՈՒՈՆ ⌈ՅԵՏ⌉ (՞) ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՅՈՅՍ / ԻՍԿ Ի :ՇՂ: (1141=1139) ԲԱՐԿՈՒԹԻԼԻՅՆ ՀԱՍԵ⌈Ա⌉Լ ԱԼՍՏՈՒԾՈՅՅ ԵՒ ԸԶՏԻԵԶԵՐ/ԱՀՈՒՉԱԿ ՔԱՂԱՔՆ ԳԱՆՁԱԿ ԿՈՐԾԱՆԵԱՅ: ԵՍ՝ ԱԲԱ⌈Մ⌉, / ՈՐԴԻ ԿԼԻՅԻՐԻԿԷԻ ԱՐՔԱԻ, ՆՈՐՈԳԵՅԻ ՎԵՐՍՏ⌈Ի⌉Ն ԶԱԼՍՏՈՒԱՅԾԱԾԻՆՍ / ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ ԵՒ ԵՂԲ⌈ԱՒ⌉Ր ԻՄՈ ⌈Դ⌉ԱՒԹԻ ԵՒ ...[98]:

Վիմագրի վերջում առնվազն երկու տառ եղծված է, սակայն դա չի խանգարում բովանդակության ամբողջացմանը: Հստակ է, որ վիմագիրը բնույթով շինարարական է, որում տեղեկություններ են հաղորդվում Գանձակի ավերիչ երկրաշարժի և դրա հետևանքով

98 **Եսայան Հ., Սաղումյան Ս., Շահնազարյան Ա.**, Տավուշ ամրոցի պեղումները, «Լրաբեր» հաս. գիտ., 1991, N 2, էջ 137:

խոնարհված Տավուշ ամրոցի Ս. Աստվածածին եկեղեցու՝ Կյուրիկե արքայի որդի Աբասի կողմից նորոգման մասին: Հետաքրքրական է, որ վիմագրի սկզբում նշվում է, որ կառուցումից ՃԻ, այսինքն՝ 120 տարի հետո է եկեղեցին խոնարհվել Գանձակի ավերիչ երկրաշարժից, իսկ աղետի տարեթիվ է նշվում ՇՂ թվականը, այն դեպքում, երբ մատենագիրները (Մխիթար Գոշ[99], Սամուել Անեցի[100], Կիրակոս Գանձակեցի[101], Իբն ալ-Ասիր[102] և այլք) հիշատակում են հիմնականում ՇՁԸ (1139), Ստեփանոս Օրբելյանը՝ ՇՁԷ (1138)[103], և միայն Մխիթար Այրիվանեցին՝ ՇՂ (1141)[104] թվականը: Վիմագրի առաջին հրատարակիչներն անդրադարձել են այս խնդրին, հղել երկրաշարժի առնչությամբ հայ և օտարազգի մատենագիրների վկայությունները և եկել այն համոզման, որ վկայված ՇՂ թվականի վերծանության համար տրամաբանորեն պիտի հաշվել ոչ թե հայոց, այլ քրիստոնեական թվականով, որը սկիզբ է առնում ներկա թվականից երկու տարի առաջ, այսինքն՝ հայ տոմարագետները հիմք են ընդունել ոչ թե Քրիստոսի ծննդյան 1 թ., այլ մ.թ.ա. 2 թ., և այս դեպքում է, որ գործում է հայոց մեծ և քրիստոնեական թվականների զուգահեռության ոչ թե 551, այլ 553 գումարման սկզբունքը[105]: Այսու, վիմագրում վկայված ՇՂ տարեթիվն իրականում հաշվված է քրիստոնեական թվականով, որից հանելով ավելդիր երկու տարին՝ կստանանք 1139 թվականը[106]: Մեզ տարակուսելի է թվում վիմագրի երկրորդ տողի սկզբում ընթերցված «ԱԿԻ» բառը, որը, ուսումնասիրողների մեկնաբանմամբ, «տարեսկիզբ» է նշանակում[107]: Մենք վերընթերցել ենք «ԻՍԿ Ի» (թվացյալ Ա-ի փոքր ստեղնը իրականում քարի կոտրվածք է), իսկ առաջին տողի «ԹՈՒՈՆ»-ից հետո հավանական

99 Տե՛ս **Մխիթար Գոշ**, ժամանակագրութիւն, «Մատենագիրք Հայոց», հատ. Ի., ԺԲ. դար, գիրք Բ., էջ 607:

100 Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, ժամանակագրութիւն. Ադամից մինչեւ 1776 թ., աշխատասիրությամբ՝ **Կ. Մաթևոսյանի**, Եր., 2014, էջ 212-213:

101 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 117, 200:

102 Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, Լիակատար պատմություն (Ալ-Քամիլ ֆի-լ-Տարիխ), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի**, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. 11, Եր., 1981, էջ 250:

103 Տե՛ս **Ստեփանոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 340-341:

104 Տե՛ս **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց **Ք. Պ[ատկանեան]**, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 78:

105 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 110:

106 Տե՛ս **Եսայան Հ., Սաղումյան Ս., Շահնազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 140:

107 Տե՛ս նույն տեղում:

ենք համարում «ՅԵՏ» բառը, որն իմաստային առումով ևս կապակից է բնագրին:

Այսպիսով՝ գրչի բնորոշմամբ «տիեզերահռչակ» Գանձակ քաղաքի երկրաշարժի մասին եղած մատենագրական աղբյուրները լրացնելու է գալիս նաև յուրօրինակ թվագրմամբ վիմագիրը, որն ուղղակիորեն հաղորդում է նաև երկրաշարժի ընդգրկման սահմանների, հասցրած վնասների, տվյալ դեպքում՝ Տավուշ ամրոցի Ս. Աստվածածին եկեղեցու (ըստ վիմագրի՝ կառուցվել էր երկրաշարժից դեռևս 120 տարի առաջ, այսինքն՝ 1019 թ.[108]) խոնարհման մասին: Վիմագրի վերջում վկայված է նաև Աբասի եղբոր՝ Մածնաբերդում իշխող Դավիթ Կյուրիկյանի անունը, որի և Աբասի հիշատակի համար էլ կազմվել է մեզ հասած վիմական վկայագիրը:

Երկրաշարժի վկայությամբ երկրորդ վիմագիրը **Անտիոքի մերձակա Ռուճի հովտի Գնիե գյուղից** է, որի արևելյան կողմում է գտնվում Շեյխ Իսա կոչվող հին աղբյուրը՝ նորոգման մասին վկայող տարաժամանակյա երեք վիմագրերով (նկ. 14ա, բ): Դրանցից վաղագույնը կրում է Հիջրի 1238, Փրկչական 1822 թվականը և հայտնում աղբյուրի վնասվելու հիմնական պատճառը, որը 1822 թ. մեծ երկրաշարժն է՝ առավել հայտնի «Հալեպի երկրաշարժ» անունով:



Նկ. 14ա, բ. Գնիե գյուղի հին աղբյուրի նորոգման վիմագիրը. 1822 թ. (լսնկ.՝ Հ. Չոլաքյանի, 2006 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2023 թ.)

ԹԻԻ ՇԱ/ՐԺԻՆ / ՀԼԻՃԸՐՅԻ 1238 (1822): / ԵՂԵԻ ՊԱՏՃԱՌ / ՆՈՐՈԳՄԱՆ ԱՂԲԻ/ՐՈՍ
ՇԷԽ ԻՍԱՆ / ԱՐԴԻԱՄԲ ՏԷՐ ՕՎԱՆՆԷ/ՍԻՆ....[109]:

108 Տե՛ս նույն տեղում, էջ 141:
109 **Չոլաքեան Յ.**, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Անթիլիաս, 2006, էջ 100-101:

Ավելի ուշ՝ 1863 թ., աղբյուրը վերստին նորոգվել է Օվաննես քահանայի որդու՝ տեր Ակոբի միջոցներով (մինչ այդ նորոգվել էր նաև 1832 թ.), ինչի առիթով ևս վիմագիր է կազմվել. «Վերստին նորոգեցաւ աղբիւրս արդեամբ Տէր Օհաննէսին որդի Տէր Ակոբին, հիձրի 1280 (1863)»[110]: 1932 թ. գյուղապետ Շեխ Ույեսի նախաձեռնությամբ ավելի ցածրադիր նոր աղբյուր է կառուցվել, իսկ հինը պարսպապատվել է, արձանագիր քարերն էլ ագուցվել են ավազանի որմերին՝ իրար կից[111]:

Անշուշտ, դիտարկվող երևույթների մասին պահպանված վիմագրերը վերոբերյալ օրինակներով բնավ սպառված համարվել չեն կարող: Այդուհանդերձ, ներկայացված նյութն էլ բավարար է ընդհանուր գաղափար կազմելու բովանդակային առումով յուրատեսակ վիմագրերի ու դրանցում ամփոփված երևույթների մասին: Երկրաշարժերի, Արեգակի խավարման, ծովի ալեկոծման, երաշտի ու մորեխի մասին վկայող վիմագիր հուշարձաններն ակամա պարզում են նաև աղետների հետևանքները. երկրաշարժի դեպքում՝ զոհեր, ավերածություններ, հուշարձանի ի նորո կառուցում կամ նորոգում, նոր շինություններով համալրում, ծովի ալեկոծման դեպքում՝ նավաբեկություն ու ջրահեղձում, իսկ երաշտի ու մորեխների ակտիվացման երևույթն ուղեկցվել է հացամթերքի սղությամբ, սաստիկ թանկությամբ ու սովով, որոնք էական նշանակություն ունեն հատկապես ժողովրդագրական գործընթացների ժամանակագրությունը հստակեցնելու տեսանկյունից:

Ստորև տրվում է վերոբերյալ հիշատակություններն ամփոփող աղյուսակը:

Հ/հ	Երևույթը	Տեղը	Ժամանակը	Աղբյուրը
1	Ահեղ օրեր	ՀՀ Տավուշի մարզ, գ. Այգեձոր, խաչքար	11–12–րդ դդ.	Բարխուդարեանց, 1999, 327. Ղաֆադարյան, 2007, 301. Չանգլյան, 2011, 31. Շահինյան, 1984, 63.
2	Երկրաշարժ	ՀՀ Տավուշի մարզ, Բերդի	1141=1139 թ.	Եսայան, Սաղումյան,

110 Նույն տեղում, էջ 101:
111 Տե՛ս նույն տեղում, էջ 100:

		պատմության և կենցաղի թանգարան		Շահնազարյան, 1991, 137.
3	Երկրաշարժ	Անտիոքի մերձակա Ռուճի հովիտ, գ. Գնիե	1822 թ.	Չոլաքեան, 2006, 100–101.
4	Երաշտ (՞)	ՀՀ Շիրակի մարզ, գ. Բարձրաշեն, Ս. Աստվածածին եկեղեցի	13-րդ դ. առաջին կես	ԴՀՎ/10, 30/30. Ավագյան, 1986, 161–162.
5	Երաշտ	Վրաստանի Քվեմո Քարթլիի տարածաշրջան, Էնագեթի և Արդիսուբանի գյուղերի միջև	1455 թ.	Ըստ Ն. Իվանովի տրամադրած լուսանկարի
6	Երաշտ	Բզնունիք, Արծկե գավառամաս, գ. Առնջկուս	1515 թ.	Կարապետյան, 2017, 75.
7	Մարախ (մորեխ)	Արցախ, Մարտունու շրջան, գ. Հերհեր, Ս. Գրիգորիս եկեղեցի	1673 թ.	ԴՀՎ/5, 165/571.
8	Մորեխ	ՀՀ Տավուշի մարզ, ք. Բերդ, «Ս. Սարգսի խաչ» գերեզմանոց	1845 թ.	Վարդումյան, 1958, գ. 150.
9	Մորեխ	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կամարիս, Ս. Հակոբ եկեղեցի	1848 թ.	Սիմոնյան, 2022, 89.
10	Մորեխ	Երնջակ գավառ, գ. Ջուղա, Ս. Գևորգ եկեղեցի	1867 թ.	Այվազյան, 2004, 155/1037.
11	Ցորենի թանկություն	ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տաթև, աղբյուրի շենք	1745 թ.	ԴՀՎ/2, 34/65.
12	Հացի թանկություն	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ (ծագման վայրը՝ գ. Վահրավար), սալաքար	1880 թ.	Մանուչարյան, 1996, 51. Աբրահամյան, 2022, 45.

13	Ցորենի, գարու, խոտի ու դարմանի թանկություն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ջոլաքար, Ջոլախաչի թիկունքին	1880 թ.	Մանուչարյան, 1996, 52.
14	Ցորենի թանկություն	ԱՀ Ասկերանի շրջան, գ. Շոշ, Ս. Աստվածածին եկեղեցի	1918 թ.	անտիպ
15	Սով, հացի ու հավկիթի թանկություն	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ձառ, ժայռաբեկորի վրա	1922 թ.	անտիպ

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիմագրությունն ու ձեռագրագիտությունը: Ինը գրքի և ութ տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

Էլ. հասցե՝ ars.vimagraget@gmail.com

Summary

THE NATURAL DISASTERS AND THE HEAVENLY PHENOMENA IN EPIGRAPHS

Part II: Drought, Locust swarm

Arsen E. Harutyunyan

Candidate of Sciences in History

Keywords – epigraph, drought, ritual, cult, locust, and shortage of bread, price increase in wheat and millet, war, earthquake, famine, church, khachkar (cross-stone).

Numerous evidences about weather anomalies and climate changes, especially intense heat, water scarcity, seed drying, locust and larva activation, as well as about drought have been preserved in colophons of the Armenian manuscripts, chronicles, as well as in ethnographic materials and folklore, which are reflected in epigraphic monuments too. In fact, in order to prevent drought people often performed the rain-related and hay land rituals, erected monuments, sacrificed animals etc. Usually, the drought was

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 1 (81), հունվար-մարտ, 2023

accompanied by shortage of bread, famine and epidemics. Some interesting epigraphs dated back to the 19-20th centuries known from Zolakar, Agarak (originally from Vahravar village), Shosh, Zar and one's preserved on the khachkar (12-13th cc.) located Aygedzor village not far from "Aghjkaberd" castle, the inscription of which testifies to difficulty bring the monument, to bless it solemnly and to the erection in intercession to Christ for the terrible days.

The phenomenon of activation of locust is also should be considered as a consequence of the drought, when the hay lands and orchards were attacked by locusts for days, sometimes for years and the whole crop was destroyed. From this perspective the epigraph from St. Gevord church of Jugha village dated back to 1867 was remarkable. According to inscription, in order to prevent locust attack people prayed, offered liturgies, sacrificed animals, and blessed hay lands. After that by the grace of God, the birds saved the hay lands from disaster during three days. According to the same epigraph, the activation of locusts caused shortage and increase of bread price, as the wheat became two manat and the millet one and a half manat.

Резюме

СТИХИЙНЫЕ БЕДСТВИЯ И НЕБЕСНЫЕ ЯВЛЕНИЯ В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ

Часть 3. Засуха, саранча

Арсен Э. Арутюнян
Канд. ист. наук

Ключевые слова – эпиграфическая надпись, засуха, ритуал, поклонение, саранча, нехватка хлеба, дороговизна пшеницы и проса, война, землетрясение, голод, церковь, хачкар (крест-камень).

В памятных записях и летописях армянских рукописей, как и в этнографических и фольклорных материалах, сохранилось множество свидетельств о климатических аномалиях, природно-климатических

изменениях, особенно, о сильной жаре, нехватке воды, высыхании семян, активизации саранчи и гусениц, о засухе. Подобные свидетельства отражены также в эпиграфических памятниках. Чтобы предотвратить засуху, люди часто устраивали ритуалы вызывания дождя, сооружали монументы, совершали жертвоприношения и обряд «Андастан». Обычно длительная засуха сопровождалась нехваткой хлеба, голодом и эпидемиями. Известно несколько примечательных свидетельств, датируемых XIX-XX вв., из Золакара, Агарака (изначально из села Вахравар), Шоша, Зара, в которых говорится об этих явлениях. А эпиграфические надписи на хачкаре (крест-камень) XII-XIII вв., расположенном на краю крепости «Ахджкаберд», недалеко от Айгедзора, гласят о том, с каким трудом был привезен камень для монумента, как он был торжественно освящен и возведен, чтобы в грозные дни просить Христа о помощи.

Последствием засухи следует считать и активизацию саранчи, когда поля и сады в течение многих дней, даже лет, подвергались нашествиям саранчи, и весь урожай уничтожался. С этой точки зрения заслуживает внимания пространная эпиграфическая надпись 1867 г. на стене бывшей церкви Св. Геворга в селе Джуга, согласно которой люди для предотвращения нашествия саранчи молились, совершали литургию, жертвоприношения, обряд «Андастан», после чего, по милости Божьей, птицы за три дня спасли поля и предотвратили катастрофу. Из этой же надписи можно узнать, что вследствие активизации саранчи возникла нехватка хлеба и дороговизна, пшеница стала стоить две монеты, а просо – полторы монеты.

REFERENCES

1. **[Shahinyan A.,]** Hayastani mijnadaryan kot‘oghayin hushardzannerě. IX-XIII dareri khach‘k‘arerě, Yer., 1984 **(In Armenian)**.
2. “Divan hay vimagrut‘yan”, prak II. Gorisi, Sisiani yev Ghap‘ani shrjanner, kazmets‘` **Barkhudaryan S.**, Yer., 1960 **(In Armenian)**.
3. “Divan hay vimagrut‘yan”, prak V. Arts‘akh, kazmets‘` **Barkhudaryan S.**, Yer., 1982 **(In Armenian)**.
4. “Divan hay vimagrut‘yan”, prak X. Shiraki marz, kazmets‘` **Barkhudaryan S.**, pat. khmb.` **Sargsyan G.**, **Harut‘yunyan A.**, Yer., 2017 **(In Armenian)**.
5. “Hay hmayakan yev zhoghovrdakan aghot‘k‘ner”, ashkhatut‘yamb` **S. Harut‘yunyani**, Yer., 2006 **(In Armenian)**.

Վէմ հայագիտական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 1 (81), հունվար-մարտ, 2023

6. “Hayeren dzeṛagreri hishatakaranner. ZHD. dar”, masn A. (1301-1325 t‘t‘.), kazmoghner` **Khach‘ikyan L.**, **Mat‘evosyan A.**, **Ghazarosyan A.**, Yer., 2018 **(In Armenian)**.
7. “Hayeren dzeṛagreri hishatakaranner. ZHĒ. dar”, masn A (1601-1620 t‘t‘.), kazmets‘in` **Hakobyan V.**, **Hovhannisyan A.**, Yer., 1974, masn B (1621-1640 t‘t‘.), kazmets‘in` **Hakobyan V.**, **Hovhannisyan A.**, Yer., 1978 **(In Armenian)**.
8. “Hayeren dzeṛagreri hishatakaranner. ZHYE. dar”, masn A. (1401-1450 t‘t‘.), kazmets‘` **Khach‘ikyan L.**, Yer., 1955, masn G. (1481-1500 t‘t‘.), kazmets‘` **Khach‘ikyan L.**, Yer., 1967 **(In Armenian)**.
9. “Hayots‘ patmut‘yun”, hat. III. Nor zhamanakashrjan (XVII dari yerkrord kes – 1918 t‘.), girk‘ aṛajin (XVII dari yerkrord kes – XIX dari verj), khmb.` **Melk‘onyan A. yev urishner**, Yer., 2010 **(In Armenian)**.
10. “Manr zhamanakagrut‘yunner. XIII-XVIII dd.”, hat. I, kazmets‘` **Hakobyan V.**, Yer., 1951, hat. II, kazmets‘` **Hakobyan V.**, Yer., 1956 **(In Armenian)**.
11. “Mayr Mashtots‘”, hat. A., girk‘ A., ěst hnagoyn yerkat‘agir dzeṛagreri yew hamematut‘eamb Astuatsashunch‘ mateani, bnagrakan yew kanonats‘ankayin yaweluatsovk‘, ashkhatasirut‘eamb` **G. Tēr-Vardaneani**, S. Ējmiatsin, 2012 **(In Armenian)**.
12. “Mshak”, T‘iflis, 1872, 27 yulisi, N 29, 1880, 4 (16) aprili, N 57, 1880, 5 (17) marti, N 35, 1882, 8 (20) aprili, N 58, 1883, 14 septemberi, N 129, 1895, 28 yunvari, N 11, 1916, 21 yunvari, N 13 **(In Armenian)**.
13. **Abrahamyan A.**, Hayots‘ gir yev grch‘ut‘yun, Yer., 1973 **(In Armenian)**.
14. **Abrahamyan Ē.**, Sovi vkayut‘yunĕ Vahravari vimagrerits‘ mekum, “Vardzk‘”, Yer., 2022, N 17, ēj 44-45 **(In Armenian)**.
15. **Abrahamyan H.**, Gyumru “Yot‘ Verk‘” srbapatkeri patmut‘yunĕ, “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 2017, N B, ēj 90-115 **(In Armenian)**.
16. **Alishan Gh.**, Ayrarat. bnashkharh Hayastaneayts‘, Venetik, 1890 **(In Armenian)**.
17. **Alishan Gh.**, Sisakan. teghagrut‘iwn Siwneats‘ ashkharhi, Venetik, 1893 **(In Armenian)**.
18. **Aṛak‘el Dawrizhets‘i**, Girk‘ patmut‘eants‘, ashkhatasirut‘yamb` **L. Khanlaryani**, Yer., 1990 **(In Armenian)**.
19. **Avagyan S.**, Vimakan ardzanagrut‘yunneri baṛak‘nnut‘yun, Yer., 1986 **(In Armenian)**.
20. **Ayvazyan A.**, Nakhijevani vimagrakan zhaṛangut‘yunĕ, hat. A. Jugha, Yer., 2004 **(In Armenian)**.
21. **Barkhudareants‘ Makar yeps.**, Aghuanits‘ yerkir yew drats‘ik‘. Arts‘akh, Yer., 1999 **(In Armenian)**.
22. **Barkhudaryan S.**, Sots‘ial-tntesakan bovandakut‘yan ardzanagrut‘yunner yev ditoghut‘yunner, “Ējer hay zhoghovrdi patmut‘yan yev banasirut‘yan” (hodvatsneri zhoghovatsu), pat. khmb.` **Barkhudaryan V., Hakobyan V.**, Yer., 1971, ēj 73-95 **(In Armenian)**.
23. **Bdoyan V.**, Yerkragortsakan mshakuytĕ Hayastanum, Yer., 1972 **(In Armenian)**.
24. **Ch‘anglyan I.**, Shamshadin. patmakan teghekut‘yunner, Yer., 2011 **(In Armenian)**.
25. **Ch‘olak‘ean Y.**, Antiok‘i merdzakay Ṛuchi hoviti hayerĕ (patma-azgagrakan usumnasirut‘iwn), Ant‘ilias, 2006 **(In Armenian)**.
26. **Gasparyan G.**, **Grigoryan A.**, **Hakobyan A. yev urishner**, Hayots‘ lezvi barbaṛayin baṛaran, hat. B. (Ē-TS), Yer., 2002 **(In Armenian)**.
27. **Ghafadaryan K.**, Shamshadini 1935 t‘vi hnagitakan gitarshavĕ, “Ējer hayots‘ mijnadaryan mshakuyt‘i yev patmut‘yan”, hat. 5, Yer., 2007, ēj 231-332 **(In Armenian)**.
28. **Ghanalanyan A.**, Avandapatum, Yer., 1969 **(In Armenian)**.

29. **Grigoryan A.**, Artakarg iravichaknerě yev chgnazhamayin kaṛavarman mijotsʻaṛumnerě mijin darerum, “Chgnazhamayin kaṛavarum yev tekhnologianer” gitakan yev gitametʻodakan hodvatsneri zhoghovatsu, hat. 13, Yer., 2018, ēj 238-244 **(In Armenian)**.
30. **Harutʻyunyan A.**, Petrosakhachʻi norahayt ardzanagrutʻyunĕ, “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 2018, N Tʻ., ēj 80-87 **(In Armenian)**.
31. **Harutʻyunyan A.**, Sovi vkayutʻyunnerě ZHĒ. daraskzbi matenagrakan aghbyurnerum, “Banber Matenadarani”, Yer., 2021, N 32, ēj 224-233 **(In Armenian)**.
32. **Harutʻyunyan A.**, Tarerayin aghetnern u yerknayin yerevuytʻnerě vimagrerum: Mas aṛajin: Yerkrasharzh, “Vēm”, Yer., 2022, N 1, ēj 178-196, Mas yerkrord: Aregaki khavarum, tsovi alekotsum, “Vēm”, 2022, N 3, ēj 168-196 **(In Armenian)**.
33. **Harutʻyunyan A.**, Vagharshapat. vankʻerě yev vimakan ardzanagrutʻyunnerě, S. Ējmiatsin, 2016 **(In Armenian)**.
34. **Harutʻyunyan Kh.**, Hayeren dzeṛagreri hishatakarannerě, Yer., 2019 **(In Armenian)**.
35. **Haykuni S.**, Bagrewand. Jrabashkh gawaṛ, masn A., Ējmiatsin, 1894 **(In Armenian)**.
36. **Hayrapetyan Tʻ.**, Andzrevaber yev andzrevakhapʻan tseseri yerkhakadir ĕnkalumneri shurj, “Patmabanasirakan handes”, Yer., 2004, N 3, ēj 217-227 **(In Armenian)**.
37. **Hovsepʻyan Ṛ.**, **Abrahamyan H.**, “Katʻnavov matagh”` andzrevaber yev andzrevakhapʻan tses Syunikʻum, “Lraber” has. git., Yer., 2022, N 3, ēj 349-366 **(In Armenian)**.
38. **Hovsepʻyan Ṛ.**, Hayastani yezdineri “Buka barane” (“andzrevi hars”) yev myus andzrevaber tseserě, “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 2017, N A., ēj 114-146 **(In Armenian)**.
39. **Ibn al-Asir**, Liakatar patmutʻyun (Al-Kʻamil fi-l-Tarikh), targmanutʻyun bnagritsʻ, aṛajaban yev tsanotʻagrutyʻunner` **A. Ter-Ghevondyani**, “Ōtar aghbyurnerě Hayastani yev hayeri masin”, hat. 11, Yer., 1981 **(In Armenian)**.
40. **Kʻajberuni**, Chanaparhordakan nkatoghutʻyunner, hratarakutʻyan patrastetsʻin` **Kʻalantʻaryan A.**, **Sargsyan G.**, **Melkʻonyan H.**, Yer., 2003 **(In Armenian)**.
41. **Karapetyan S.**, Hayastani patmutʻyun, hat. G. Artske, Yer., 2017 **(In Armenian)**.
42. **Kirakos Gandzaketsʻi**, Patmutʻyun Hayotsʻ, ashkhatasirutʻyamb` **K. Melikʻ-Ōhanjanyani**, Yer., 1961 **(In Armenian)**.
43. **Lalayan Ye.**, Yerker, hat. 3, pat. khmb.` **Vardumyan D.**, Yer., 2004 **(In Armenian)**.
44. **Lalayean Ye.**, Nor-Bayazēti gawaṛ. Jri pashtamunkʻ, “Azgagrakan handēs”, girkʻ XVII, Tʻiflis, 1908, ēj 86-87 **(In Armenian)**.
45. **Lisitsʻyan St.**, Zangezuri hayerě, Yer., 1969 **(In Armenian)**.
46. **Malkhasyan M.**, Zhoghovrdagrakan gortsĕntʻatsʻnerě Hayastanum 16-rd darum – 17-rd dari aṛajin kesin, Yer., 2020 **(In Armenian)**.
47. **Malkhaseantsʻ St.**, Hayerēn batsʻatrakan baṛaran, hat. 2, Yer., 1944, hat. 3, Yer., 1944, hat. 4, Yer., 1945 **(In Armenian)**.
48. **Manuchʻaryan A.**, Hatsʻi tʻankutʻyan vimagir hishatakutʻyunner Meghru yev Martunu shrjannerum, “Hayastani Hanrapetutʻyunum 1993-1995 tʻtʻ. hnagitakan hetazotutʻyunneri ardyunkʻnerin nvirvats 10-rd gitakan nstashrjan”, zekutsʻumneri tʻezer, Yer., 1996, ēj 51-52 **(In Armenian)**.
49. **Melikʻ-Pʻashayan K.**, Anahit ditsʻuhu pashtamunkʻĕ, Yer., 1963 **(In Armenian)**.
50. **Minasean M.**, Tēr Pʻilipos (Pʻilippē) Tʻekʻirtaghtsʻi u ir tagherě, “Haykazean hayagitakan handēs”, hat. LA., Pēyrutʻ, 2011, ēj 471-488 **(In Armenian)**.
51. **Minasyan Tʻ.**, Utikʻi grchʻutʻyan kentronnerě, Yer., 2020 **(In Armenian)**.
52. **Mkhitʻar Gosh**, Aṛakkʻ, ashkhatasirutʻeamb` **Ē. Piwazeani**, aṛajabanĕ` **Ō. Vardazareani**, “Matenagirkʻ Hayotsʻ”, hat. I. ZHB. dar, girkʻ B., Yer., 2014, ēj 15-106 **(In Armenian)**.

53. **Mkhit‘ar Gosh**, Zhamanakagrut‘iwn, “Matenagirk‘ Hayots‘”, hat. I. ZHB. dar, girk‘ B., Yer., 2014, ēj 605-612 **(In Armenian)**.
54. **Mkhit‘aray Ayrivanets‘woy** Patmut‘iwn zhamanakagrakan, i loys ĕntsayeats‘ **K‘. P[atkanean]**, S. Peterburg, 1867 **(In Armenian)**.
55. **Mkrtch‘yan S.**, Toner. Haykakan zhoghovrdakan tseser, sovoruyt‘ner, havatalik‘ner (avanduyt‘ yev ardiakanut‘yun), Yer., 2010 **(In Armenian)**.
56. **Nersēs Shnorhali**, Hanelukner, aṛajabanĕ yev k‘nnakan bnagirĕ` **A. Mnats‘akanyani**, “Matenagirk‘ Hayots‘”, hat. IA., girk‘ A., Yer., 2018, ēj 1219-1323 **(In Armenian)**.
57. **Nersēs Shnorhali**, Nerboghean kensatu surb khach‘in aṛ i srboy hawrēn mermē Dawt‘ē asats‘eal, aṛajabanĕ yev k‘nnakan bnagirĕ` **A. Melk‘oneani**, “Matenagirk‘ Hayots‘”, hat. IA., girk‘ A., Yer., 2018, ēj 537-558 **(In Armenian)**.
58. **Nersēs Shnorhali**, Voghb Yedesioy, aṛajabanĕ yew k‘nnakan bnagirĕ` **P. Khach‘atreani** yew **M. Mkrtch‘eani**, “Matenagirk‘ Hayots‘”, hat. IA., girk‘ A., Yer., 2018, ēj 141-205 **(In Armenian)**.
59. **Ōrbēlean S.**, Patmut‘iwn nahangin Sisakan, T‘iflis, 1910 **(In Armenian)**.
60. **Petrosyan H.**, Khach‘k‘ar. tsagumĕ, gortsaṛuyt‘ĕ, patkeragrut‘yunĕ, imastabanut‘yunĕ, Yer., 2008 **(In Armenian)**.
61. **Saghumyan S.**, “Sharzh yeghew”, “Hushardzan” taregirk‘, hat. B., Yer., 1993, ēj 3-9 **(In Armenian)**.
62. **Samuēl Anets‘i yew sharunakoghner**, Zhamanakagrut‘iwn. Adamits‘ minch‘ew 1776 t‘., ashkhatasirut‘yamb` **K. Mat‘evosyani**, Yer., 2014 **(In Armenian)**.
63. **Sargsyan G.**, Morekhneri arshavank‘nerĕ, “Artakarg t‘ert‘”, Yer., 2004, N 9, 10 **(In Armenian)**.
64. **Sedrakean Aristakēs vrd.**, Hnut‘iwnk‘ hayreneats‘ i gawaṛin Yernjaku, Vagharshapat, 1872 **(In Armenian)**.
65. **Simonyan L.**, S. Hakob Mtsbna hayrapeti hishatakĕ hayots‘ mej, Yer., 2022 **(In Armenian)**.
66. **Smbateants‘ Mesrovb vrd.**, Surb Yakobay jur, “Ararat”, S. Ējmiatsin, 1870, N Z., ēj 189-195 **(In Armenian)**.
67. **Srvandztyants‘ G.**, Grots‘ u brots‘, “Yerker”, hat. 1, Yer., 1978 **(In Armenian)**.
68. **Tēr-Dawt‘eants‘ Dawit‘ vrd. Ulnets‘i**, Storagrut‘iwn ayts‘elut‘ean, “Arshaloys Araratean”, Zmiwṛnia, 1867, 27 yunisi, N 808 **(In Armenian)**.
69. **Vardumyan D.**, Berd. tapanagrer (1958 t‘., september), HAI arkhiv, D. Vardumyani fond, g. 150 **(In Armenian)**.
70. **Yesayan H.**, **Saghumyan S.**, **Shahnazaryan A.**, Tavush amrots‘i peghumnerĕ, “Lraber” has. git., 1991, N 2, ēj 132-141 **(In Armenian)**.